ԹՈՒԱԿԻՑ, ա. Զուգարթել:
- ԹՈՒԱԿԻՑ ԱՌԵԼ, տե՛ս ԹՈՒԱԿՅԵԼ:
ԹՈՒԱԿՅԵԼ, նք. Թուակից առնել, զուգարթուել:
ԹՈՒԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Համապատասխանութիւն (թուակից լինելը):
ԹՈՒԱՆԻԿ, ա. Հարուստ, մեծատուն:
ԹՈՒԵԼ, նք. 1. Համարել, հաշուել: 2. Դասել: 3. չք. Երևել, ձևանալ:
ԹՈՒԵԼՈՒԹԻՒՆ, գ. Կարծելութիւն, կարծիք:
ԹՈՒԵՅՅԱԼՆ, գ. Թուիք, կարծիք, ենթադրութիւն, վարկած:
ԹՈՒԵՑՈՒՑԱՆԵԼ, սք. Կարծեցուցանել, երևեցուցանել:
ԹՈՒԻ, մք. Երևի, կարծի:
ԹՈՒԻՔ, տե՛ս ԹՈՒԵՅՅԱԼՆ:
ԹՈՒԼԱԳՈՅՆ, ա. Մեղկագոյն, տկարագոյն:
ԹՈՒԼԱԿԻ, մ. Թոյլատարագ:
ԹՈՒԼԱՄԱՐՄԻՆ, ա. Թուլամորթ, թուլատարը (թոյլ մեղկ մարմնով):
ԹՈՒԼԱՄԻՏ, ա. Մեղկ, յողողող, անարի, վատ:
ԹՈՒԼԱՄՈՐԹ, ա. Թուլամարմին, անարի, փափկակեաց, հեշտասէք, կնամարդի:
ԹՈՒԼԱՄՈՐԹՈՒԹԻՒՆ, գ. Թուլամտութիւն, մեղկութիւն, հեշտասիրութիւն, վատաստութիւն, թուլաստութիւն:

ԹՈՒԼԱՄՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԹՈՒԼԱ-
ՄՈՐԹՈՒԹԻՒՆ:
ԹՈՒԼԱՆԱԼ, չբ. Մեղկանալ, մեղմանալ,
զիջանել, նուազել, պակասել, լքանել:
ԹՈՒԼԱՍԻՐՏ, ա. Վատասիրտ, անհոգ:
ԹՈՒԼԱՍՐՏՈՒԹԻՒՆ, գ. Վատասրտու-
թիւն, թուլամորթութիւն, մեղկութիւն,
անհոգութիւն:
ԹՈՒԼԱՏԱՐՐ, ա. Թուլամարմին, կակուղ,
թոյլ:
ԹՈՒԼԱՅՈՒՑԱՆԵԼ, պբ. 1. Մեղմացու-
ցանել, թուլութիւն առնել, զիջուցանել,
մեղկացուցանել, թեթեւացուցանել: 2.
Թոյլ տալ, թողացուցանել:
ԹՈՒԼՈՒԹԻՒՆ, գ. Մեղմութիւն, մեղկու-
թիւն, թուլամորթութիւն:
- ԹՈՒԼՈՒԹԻՒՆ ԱՆՆԵԼ, տե՛ս ԹՈՒԼԱ-
ՅՈՒՑԱՆԵԼ (1):
ԹՈՒԽ, ա. Սեաւ, մթադոյն, թխագոյն:
- ԹՈՒԽ ՋԳԵՆՈՒԼ, Ի ԹՈՒԽՍ ՀԱՄԱԿԵԼ,
տե՛ս ԹԽԱՋԳԵՍԼ ԼԻՆԵԼ:
ԹՈՒԽՍ, միայն՝
- Ի ԹՈՒԽՍ ՆՍՏԵԼ (Իմ), տե՛ս ԹԽԵԼ:
ԹՈՒՂԹ, գ. 1. Թերթ: 2. Քարտէս, նամակ,
գիր, հրովարտակ:
ԹՈՒՂԹԱԳՐԵԼ, տե՛ս ԹՂԹԵԼ:
ԹՈՒՄԲ, գ. Հողաբլուր:
ԹՈՒՆԱԲԵՐ, ա. Թունաւորաբեր, թու-
նարկու, թունաւոր:
ԹՈՒՆԱԼԻ, ԹՈՒՆԱԼԻՅ, ա. Թունաբեր,
թունաւոր, չարաթոյն:
ԹՈՒՆԱՐԿՈՒ, տե՛ս ԹՈՒՆԱԲԵՐ:
ԹՈՒՆԱՌՈՐ, ա. Դեղոտ, թունաբեր, ժան-
գաւոր:
ԹՈՒՆԱՌՈՐԱԲԵՐ, տե՛ս ԹՈՒՆԱԲԵՐ:
ԹՈՒՆ Դ, տե՛ս ԹԻՆ Դ:
ԹՈՒՆԵԼ, նբ. Դեղահարել, դեղել, փխբ.
գրգռել (դառնութեամբ լցնել):
ԹՈՒՉՈՒԹԻՒՆ, գ. Շողմութիւն, շողո-
քորթութիւն, քծնութիւն:
ԹՈՒՐ, գ. Սուր, սուսեր:
ԹՈՒՐԾ¹, տե՛ս ԱՅՏ:

ԹՈՒՐԾ², ա. Թրծուն, նիւթծուն:
ԹՈՒՓ, գ. 1. Տունկ: 2. Ճիւղ, ոստ (տե-
րեալից):
ԹՈՒՔ, գ. Լորճն, տողիք, տողուկք:
ԹՈՒՔ, թռքք, գ. Շնչափող, շնչակալ
անօթք:
ԹՈՒՆԵԼ (Իմ), տե՛ս ԹՈՒՉԵԼ (Իմ):
ԹՈՒԹԻԵԼ, չբ. Ոստոսել:
ԹՈՒԹ, տե՛ս ԱՍՏՂ ՍԼԱՅԵԱԼ:
ԹՈՒԹՉ, գ. Թռչումն, թռչուն, սլացումն,
սլացք:
ԹՈՒՆՈՒԼ, տե՛ս ԹՈՒՉԵԼ (Իմ):
ԹՈՒՉԱՆ, տե՛ս ԹՈՒԹՉԲ:
ԹՈՒՉԵԼ (Իմ), չբ. 1. Թռանել, թռնուլ,
վերաթեւել, թեւապարել, թեւածել, սաւառ-
նել, ճախրել: 2. Սլանալ, խոյանալ,
սուբայ:
ԹՈՒՉՈՒՄՆ, տե՛ս ԹՈՒԹՉԲ:
ԹՈՒՉՈՒՆ, գ. 1. Հաւ: 2. ա. Թեւաւոր (որ
թռչում է):
ԹՐԵԼ, տե՛ս ՉԱՆԳԱՆԵԼ:
ԹՐԹՈՒՐ, գ. Որդն (միջատներէ՝ ձուկց
դուրս եկած որդը մինչև առաջին փո-
խակերպումը):
ԹՐԹՐԱԿ, ա. Դիւրադարձ, ճարտար, պա-
տիր, սուտակասպաս, քաղցրաբան:
ԹՐԹՐԱԿԱՆ, ա. Դիւրադարձ, դիւրա-
շարժ, սրընթաց:
ԹՐԾԵԼ, նբ. Կարծրացուցանել (հրով):
ԹՐԾՈՅ, գ. Փռուն, հնոց (կաւեղէնը թրծե-
լու համար):
ԹՐԾՈՒՆ, տե՛ս ԹՈՒՐԾ²:
ԹՐՄԵԼ, տե՛ս ՉԱՆԳԱՆԵԼ:
ԹՐՈՒՇԱՅ, գ. Մարգարիտ (կեղծ),
ուլունք:
ԹՐՋԵԼ, նբ. 1. Թանալ, տամկացուցանել,
ոռոգանել, թրմել (Չրով): 2. չբ. փխբ. Ար-
բանալ: 3. փխբ. Ամօթահարել:
ԹՐՔԱՄ, գ. Յաւելուածք, կրկյանք, աղբ:
ԹՔԱՎՈՒՏ, ա. Մացառաղոց:
ԹՔԱԿՈՄ ԱՆՆԵԼ, տե՛ս ԹՔԱԿՈՄԵԼ:
ԹՔԱԿՈՄԵԼ, նբ. Թքակոծ առնել, թքա-

նել, անպատուել (թուքուժուք տալ):
 ԹՔԱՆԵԼ, չբ. նբ. 1. Թքել, թքնուել,
 թքթքել (յաճախակի): 2. փխբ. Մերժել
 (անարգանքով): 3. Ի բայ ընկենուել, վիժել:
 ԹՔԵԼ, տե՛ս ԹՔԱՆԵԼ:
 ԹՔԹՔԵԼ, տե՛ս ԹՔԱՆԵԼ:
 ԹՔՆՈՒԼ, տե՛ս ԹՔԱՆԵԼ:
 ԹԾԹԱՓԱՆՔ, տե՛ս ԹԾԹԱՓՈՒՄՆ:
 ԹԾԹԱՓԵԼ, նբ. Թափել, ձգել, ընկենուել,
 ցուց տալ, սասանել:
 - Ի ԹԾԹԱՓԵԼ ԱԿԱՆ կամ ՅԱԿԱՆ
 ԹԾԹԱՓԵԼ, տե՛ս Ի ԹԱՐԹԵԼ ԱԿԱՆ:
 ԹԾԹԱՓՈՒՄՆ, գ. Թօթափանք (թօ-
 թափելը):
 ԹՕՆ, տե՛ս ԱՆՁՐԵԻ:
 ԹՕՆԸՆԿԷՑՔ, գ. Տեղատարափ (անձրևի):
 ԹՕՆՈՒՏ, ա. Խոնաւուտ:
 ԹՕՇԱԿ, տե՛ս ԹՈՇԱԿ:
 ԹՕՇԵԼ (իմ), չբ. Թառամել, նուաղել,
 թուլանալ:

Ժ

ԺԱԺ, տե՛ս ԽՈՒԻԻ:
 ԺԱԺՄՈՒԿՔ, գ. Շարժմակք, բժժանք,
 յուռուք:
 ԺԱԽ, տե՛ս ԺԱՀ:
 ԺԱՀ, գ. Ժախ, աղտեղութիւն, գարշա-
 շոտութիւն:
 ԺԱՀԱԳԻՄՈՒԹԻԻՆ, գ. Տգեղութիւն:
 ԺԱՀԱՀՈՏ, ա. 1. Ժանտաշոտ, չարաշոտ:
 2. գ. տե՛ս ԺԱՀԱՀՈՏՈՒԹԻԻՆ:
 ԺԱՀԱՀՈՏԵԱԼ, տե՛ս ԺԱՀԱՀՈՏ (1):
 ԺԱՀԱՀՈՏՈՒԹԻԻՆ, գ. 1. Գարշաշոտու-
 թիւն, զազրաշոտութիւն, չարաշոտու-
 թիւն, աղտեղութիւն: 2. փխբ. Մեղք
 (գարշելի՛ պարսաւելի արարք):
 ԺԱՀԱՏԵԱԿՈՒԹԻԻՆ, ԺԱՀԱՏԵՍՈՒ-
 ԹԻԻՆ, գ. Տգեղութիւն, տձևութիւն, ան-
 վայելչութիւն:

ԺԱՀՐ, տե՛ս ԹՈՅՆ:
 ԺԱՄ, գ. 1. Ժամանակ, պահ: 2. (եկեղց-)
 Ժամակարգութիւն:
 - ԺԱՄ ԴՆԵԼ՝ ՏԱԼ՝ ԱՌՆԵԼ. Ժամադիր
 առնել՝ լինել, ժամադրել:
 - ԺԱՄԷ Ի ԺԱՄ ԱՌՆԵԼ, ԺԱՄ Ի ԺԱՄ
 ՍԱՀՄԱՆԵԼ. Յապաղել, յերկարաձգել:
 - ԺԱՄՍ ԺԱՄՍ, ԸՆԴ ԺԱՄՍ ԺԱՄՍ, մ.
 Երբեմն երբեմն:
 - ԺԱՄ Ի ԺԱՄ, ԺԱՄԷ Ի ԺԱՄ, ԺԱՄ
 ՔԱՆ ԶԺԱՄ, ԺԱՄ ԸՆԴ ԺԱՄ, մ. Ընդ
 ժամանակս ժամանակս, ըստ ժամանակս
 ժամանակս, Հետզհետէ, երբեմն երբեմն,
 մերթ մերթ:
 - ԺԱՄՈՒ ԺԱՄՈՒ, մ. Անընդհատ, շա-
 բունակաբար:
 - ԱՌ ԺԱՄ ՄԻ, ԸՆԴ ԺԱՄՍ, մ. Առ այժմ,
 առ ժամանակ մի:
 - Ի ԺԱՄՈՒՆ, մ. Յայնժամ, առ ժամայն:
 - ԺԱՄ Է, մբ. Ի դէպ է:
 ԺԱՄԱԲԱՇԽ, ա. գ. Ժամադէտ:
 ԺԱՄԱԳԻԻՏ, ա. գ. 1. Ժամանակագիւտ:
 2. Դիպողական:
 - Ի ԺԱՄԱԳԻԻՏ, ա. Ժամանակաւոր, առ-
 ժամանակեայ:
 ԺԱՄԱԴԷՏ, տե՛ս ԺԱՄԱԲԱՇԽ:
 ԺԱՄԱԴԻՏԱԿ, գ. Ժամադիտական (աստ-
 դաբաշխական գործիք):
 ԺԱՄԱԴԻՏԱԿԱՆ, տե՛ս ԺԱՄԱԴԻՏԱԿ:
 ԺԱՄԱԴԻՐ, ա. 1. Ժամադրական: 2. գ.
 Ժամադրութիւն:
 - ԺԱՄԱԴԻՐ ԱՌՆԵԼ, ԺԱՄԱԴԻՐ ԼԻ-
 ՆԵԼ. Ժամ դնել, ժամակալ լինել, ժա-
 մադրել, ժամանակել:
 ԺԱՄԱԴԻՐԱԿԱՆ, տե՛ս ԺԱՄԱԴԻՐ (1):
 ԺԱՄԱԴԻՐԵԼ, տե՛ս ԺԱՄԱԴԻՐ ԱՌՆԵԼ:
 ԺԱՄԱԴԻՐՈՒԹԻԻՆ, գ. 1. Ժամակալու-
 թիւն: 2. Օրհաս:
 ԺԱՄԱԿԱԼ ԼԻՆԵԼ, տե՛ս ԺԱՄԱԴԻՐ
 ԼԻՆԵԼ:
 ԺԱՄԱԿԱԼՈՒԹԻԻՆ, տե՛ս ԺԱՄԱԴԻՐՈՒ-
 ԹԻԻՆ (1):

ԺԱՄԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. (եկեղյ.) Ժամ
(եկեղեցական արարողութիւն):
ԺԱՄԱՀԱՐ, գ. Ժամաճայն, կոչարան:
ԺԱՄԱԶԱՅՆ, տե՛ս ԺԱՄԱՀԱՐ:
ԺԱՄԱՆ, ա. Փռութկոտ (ժամանակին՝ շուտ
Հասնող):
- ԺԱՄԱՆ ԱՌՆԵԼ, ԺԱՄԱՆ ԿՅՅՈՒՑԱ-
ՆԵԼ. Ժամանեցուցանել, Հասուցանել:
ԺԱՄԱՆԱԿ, գ. 1. Ամանակ: 2. Տարի, ամ:
3. Դար: 4. Հասակ, տիք: 5. Օրհաս: 6.
Կենցաղ (կեանքի վիճակ): 7. Ժամա-
նակակէտ (ներկայ պահը): 8. Պարապ
(պատեհ՝ յարմար ժամանակ), առիթ: 9.
Եղանակ (տարուայ):
- ԺԱՄԱՆԱԿԱՒ, մ. Առ ժամանակ մի, առ
ժամանակն, առ ժամանակս, ժամանա-
կաբար:
- ԸՆԴ ԺԱՄԱՆԱԿՍ ԺԱՄԱՆԱԿՍ, ԸՍՏ
ԺԱՄԱՆԱԿՍ ԺԱՄԱՆԱԿՍ, տե՛ս ԺԱՄ Ի
ԺԱՄ:
ԺԱՄԱՆԱԿԱԲԱՐ, տե՛ս ԺԱՄԱՆԱԿԱՒ:
ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ, ա. գ. 1. Քրոնոգրա-
փեւս: 2. Ժամանակագրական, 3. տե՛ս
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ:
ԺԱՄԱՆԱԿԱԳԻՒՏ, տե՛ս ԺԱՄԱԳԻՒՏ
(1):
ԺԱՄԱՆԱԿԱԳՈՅՆ, ա. Երկայնժամա-
նակեան:
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ, ա. Ժամանա-
կական (ժամանակագրութեան վերա-
բերող՝ յատուկ):
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Ժամանա-
կագիր, քրոնիկոն:
ԺԱՄԱՆԱԿԱԶԱՆՅ, ա. Մերացեալ, Հնա-
ցեալ (ժամանակն անցած):
ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ, ա. 1. Ժամանակաւոր
առժամանակեայ: 2. Ժամանակագրական:
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ, ա. Համաժամանակ,
Հանդիսամանակ:
ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ, տե՛ս ԺԱՄԱՆԱ-
ԿԱԿԱՆ:
ԺԱՄԱՆԱԿԵԱՅ, ա. 1. Ժամանակաւոր,

առժամանակեայ, ժամանակեան: 2. գ.
Կենցաղ:
ԺԱՄԱՆԱԿԵԱՆ, տե՛ս ԺԱՄԱՆԱԿԵԱՅ
(1):
- ԺԱՄԱՆԱԿԵԱՆ ՄԻՈՅ, մ. Առ ժամա-
նակ մի:
ԺԱՄԱՆԱԿԵԼ, տե՛ս ԺԱՄԱԴԻՐ ԼԻՆԵԼ:
ԺԱՄԱՆԱՒՈՐԵԼ (իմ), չբ. ՅԱՄԵԼ:
ԺԱՄԱՆԵԼ, չբ. 1. Հասանել: 2. Կանխել,
նախաժամանել, փութալ: 3. Պարապ առ-
նուլ, ձեռնհաս լինել, բաւել, կարել,
կարողանալ:
ԺԱՄԱՆԵՅՏՈՒՅԱՆԵԼ, պբ. Ժաման առնել՝
կացուցանել, Հասուցանել:
ԺԱՄԱՆՈՅ, գ. (եկեղյ.) Սրուակ (փոքրիկ
անօթ, որի մէջ լցնում են պատարազի
գլխին):
ԺԱՄԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ժամանումն
(ժամանելը, Հասնելը):
ԺԱՄԱՆՈՒՄՆ, տե՛ս ԺԱՄԱՆՈՒԹԻՒՆ:
- ԺԱՄԱՆՈՒՄՆ ՊՏՂՈՅ. ՊՏՂԱՀԱ-
ՍՈՒԹԻՒՆ:
ԺԱՅԹՔԵԼ, նբ. Փսխել, զգայուել:
ԺԱՅԹՔՈՒՄՆ, գ. Զգայուումն, զգայ-
ուութիւն:
ԺԱՅՌ, գ. Բարաժայռ, քարաժեռ:
ԺԱՆԱՒԱՐ, տե՛ս ԺԱՆՈՒԱՐ:
ԺԱՆԳ, գ. 1. Երևիլ: 2. Մամուռ,
քարաքոս: 3. Մահադեղ, թոյն, ժահր: 4.
փխբ. Աղանդ (մոլար՝ վնասակար
ուսմունք):
ԺԱՆԳԱԲԵՐ, ա. Ապականարար, մա-
հաբեր (ժանդ բերող):
ԺԱՆԳԱԲՈՒՂԽ, ա. Մոլորեցուցիչ (ժանդ՝
մոլորութիւն բխող):
ԺԱՆԳԱԼԻՅ, ա. Ժանդահոծ, ժանդոտ
(ժանդով լի):
ԺԱՆԳԱԽԱՌՆ, ա. Թոււաւոր, վնասակար
(ժանդի հետ խառն):
ԺԱՆԳԱԿԵՐ, տե՛ս ԺԱՆԳԱՀԱՐ (1):
ԺԱՆԳԱՀԱՐ, ա. 1. Ժանդակեր: 2.
Որդնահար, ճճեկեր:

ԺԱՆ ԳԱՀԱՒԱՏ, ա. Չարաղանդ, չարա-
հաւատ:
ԺԱՆ ԳԱՀՈՄ, տե՛ս ԺԱՆ ԳԱԼԻՑ:
ԺԱՆ ԳԱՌ, ա. Ժանգահար, որդնահար,
փուտ:
ԺԱՆ ԳԱՌՈՒԹԻՒՆ, գ. Փտուրիւն (բոյ-
սերի մասին):
ԺԱՆ ԳԱՐԿՈՒ, ա. Ժանգաբեր, ժանգալից,
թունալից:
ԺԱՆ ԳԱՒՈՐ, ա. Ժանգոտ, թունաւոր:
ԺԱՆ ԳՈՏ, ա. Ժանգաւոր, փխբ. աղտեղի:
ԺԱՆ ԳՈՏԵԼ, նբ. Ժանգոտեցուցանել
(ժանգոտ դարձնել):
ԺԱՆ ԳՈՏԵՑՈՒՅԱՆԵԼ, տե՛ս ԺԱՆ ԳՈ-
ՏԵԼ:
ԺԱՆ Դ ..., տե՛ս ԺԱՆՏ:
ԺԱՆԻՔ, գ. 1. Ատամն, կեռիք: 2. Փղոսկր:
3. փխբ. Բոնուրիւն, ճնշումն:
ԺԱՆԿ, տե՛ս ԺԱՆԳ:
ԺԱՆՈՒՄ, գ. Ժանաւար, դեսպակ:
ԺԱՆՏ, ա. 1. Դաժան, դժնեայ, դժնակ,
անողոք, անողորմ, անգութ, չար, չարա-
բարոյ, անզգամ, ժանտագործ, չարա-
գործ: 2. Վատ, վատթար, անպիտան,
գարշ: 3. գ. Ժանտախտ:
ԺԱՆՏԱԲԱՐՈՅ, ԺԱՆՏԱԲԱՐՈՒ, ա. Չա-
րաբարոյ, չարամիտ, դաժան, խիստ:
ԺԱՆՏԱԲԵՐ, ա. Վնասակար (ժանտու-
թիւն բերող՝ կրող):
ԺԱՆՏԱԲՈՒՂԽ, ա. Չար, ապականիչ
(ժանտութիւն՝ չարիք բխող):
ԺԱՆՏԱԳՈՅՆ, ա. 1. Մահառիթ: 2. Ան-
զգամագոյն:
ԺԱՆՏԱԳՈՐԾ, ա. 1. տե՛ս ԺԱՆՏ (1): 2.
Ժանտացուցիչ, վնասակար, ապակա-
նագործ, ապականարար:
ԺԱՆՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Չարագոր-
ծութիւն, անզգամութիւն, զազրագոր-
ծութիւն:
ԺԱՆՏԱԹՉԵՆԻ, տե՛ս ՄՈՂԱԹՉԵՆԻ:
ԺԱՆՏԱԹՈՒՉ, գ. Մոլաթուզ (ժանտա-
թղեհու պտուղը):

ԺԱՆՏԱԺՈՒՏ, ա. Ժանտալից (ժանտի
ժանտը):
ԺԱՆՏԱԼԻՑ, ա. Ժանտաժուտ (չափազանց
ժանտ):
ԺԱՆՏԱԽՏ, գ. Ժանտ, ժանտամահ, մահ
տարածամ, մահ ժանտութեան:
ԺԱՆՏԱԽՏԱԿԱՆ, ա. Ժանտ, ժանտական,
մահաբեր:
ԺԱՆՏԱԽՕՍ, ա. Մոլար (ժանտ խօս-
քերով):
ԺԱՆՏԱԿԱՆ, ա. 1. Ժանտ, ժանտային,
ժանտախտական, վնասակար: 2. գ. Ժան-
տախտ:
ԺԱՆՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Վատթարու-
թիւն (ժանտ տեսք՝ կերպարանք):
ԺԱՆՏԱՀԱՄ, ա. Անախորժ, վատթար:
ԺԱՆՏԱՀՈՏ, տե՛ս ԺԱՀԱՀՈՏ:
ԺԱՆՏԱՀՈՏԵԼ (իմ), չբ. Հոտել (ժահահոտ
լինել):
ԺԱՆՏԱՀՈՏՈՒԹԻՒՆ, գ. Ժահահոտու-
թիւն, գարշահոտութիւն:
ԺԱՆՏԱՄԱՀ, գ. 1. Ժանտախտ: 2. ա.
Ժանտախտական:
ԺԱՆՏԱՅԻՆ, տե՛ս ԺԱՆՏԱԿԱՆ:
ԺԱՆՏԱՆԱԼ, չբ. Վատթարանալ, չարա-
նալ, անզգամել:
ԺԱՆՏԱՊԱՇՏՕՆ, ա. Չարապաշտօն
(գարշելի՛ գոռելի բաներ պաշտող):
ԺԱՆՏԱՏԵՍԱԿ, տե՛ս ԺԱՆՏԱՏԵՍԻԼ:
ԺԱՆՏԱՏԵՍԻԼ, ա. Ժանտատեսակ, զրժ-
նեայ, տգեղ, տձև:
ԺԱՆՏԱՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Ապականել, եղ-
ծանել, աւերել, խանգարել, խաթարել,
կորուսանել:
ԺԱՆՏԱՅՈՒՅԻՉ, ա. Ապականարար:
ԺԱՆՏԱՓՈՒՇ, գ. (բար.) Ցաքի:
ԺԱՆՏԿԷՆ, ա. Ժանտ, պիղծ, գարշելի:
ԺԱՆՏՈՒԹԻՒՆ, գ. Ժանտագործութիւն,
վնասակարարութիւն, չարութիւն, ան-
զգամութիւն, վատթարութիւն, յո-
ռութիւն:
- ՄԱՀ ԺԱՆՏՈՒԹԵԱՆ, տե՛ս ԺԱՆՏԱԽՏ:

ԺԱՊԱԻԷՆ, գ. Ծոպ, վերջաւոր:
ԺԱՌԱՆԳ, ա. գ. Ժառանգակալ, ժառանգորդ, ժառանգիչ, ժառանգաւոր:
ԺԱՌԱՆԳԱԿԱԼ, տե՛ս ԺԱՌԱՆԳ:
ԺԱՌԱՆԳԱԿԻՅ, ա. գ. Վիճակակից:
ԺԱՌԱՆԳԱԿՅԱՊԷՍ, մ. Եղբայրբար (որպէս ժառանգակից):
ԺԱՌԱՆԳԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Վիճակորդութիւն:
ԺԱՌԱՆԳԱԻՈՐ, գ. 1. Ժառանգ, ժառանգորդ: 2. (եկեղց.) Վիճակաւոր, եկեղցցական, կղերական, կղերիկոս:
ԺԱՌԱՆԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. (եկեղց.) Վիճակաւորութիւն կղերիկոսութիւն:
ԺԱՌԱՆԳԵԼ, նբ. 1. Ժառանգորդել: 2. նման. Ի ձեռս բերել, ստանալ, վայելել:
ԺԱՌԱՆԳԵՅՈՒԹՅԱՆԵԼ, պբ. Վիճակեցուցանել, սեպհականել:
ԺԱՌԱՆԳԻՉ, ԺԱՌԱՆԳՈՐԳ, տե՛ս ԺԱՌԱՆԳ:
ԺԱՌԱՆԳՈՐԳԵԼ, տե՛ս ԺԱՌԱՆԳԵԼ:
ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ, գ. 1. Վիճակութիւն, վիճակատուութիւն: 2. Երկիր (բնակուելու համար), կալուած, ստացուած, սեպհականութիւն: 3. Ստացք, վայելք: 4. (եկեղց.) Վիճակ (եկեղեցական թեմի բնակչութիւնը՝ ժողովուրդը):
ԺԺԱԿ, գ. Ժիժմակ (միջատ, ճճի, որդն):
ԺԺԱՆ, տե՛ս ԽՈՒԻԻ:
ԺԻԺՄԱԿ, տե՛ս ԺԺԱԿ:
ԺԻՏ, ա. 1. Հետաքրքիր, հետախոյզ, ընդվայրաքնին: 2. Հետամուտ, յանդուգն:
ԺԻՐ, ա. 1. Կորովի, կարող, քաջ, տոկուն, փոյթ, գործունեայ, աշխոյժ: 2. մ. Փութով, արագ:
ԺԻՐԱԺԻՐ, ա. Ժրագոյն, քաջափոյթ:
ԺԼԱՏ, ա. Ազահ, անյազ, գօշաքաղ, ռիչտ, կծծի:
ԺԼԱՏԱՆԱԼ, ԺԼԱՏԵԼ (իմ), չբ. Ազահել (ժլատ դառնալ):
ԺԼԱՏՈՒԹԻՒՆ, գ. Աւելաստացութիւն, ազահութիւն, գօշաքաղութիւն, անյա-

զութիւն, ոչտութիւն:
ԺԽՈՐ, գ. 1. Աղմուկ, աղաղակ, շառաչիւն:
2. ա. Խառնակ, խառնափնդոր:
ԺԽՈՐԵԼ (իմ), չբ. Աղմկել, ամբոխել, վրդովել:
ԺԽՈՐՈՒՄՆ, գ. 1. Շփոթումն, վրդովումն:
ԺԽՏԵԼ, նբ. չբ. 1. Ուրանալ, հրաժարել, յուրաստ լինել՝ կալ, բացասոցել: 2. Թիկունն դարձուցանել, ապախտ առնել: 3. Նենգել:
ԺԽՏՈՒԹԻՒՆ, գ. Ապերախտութիւն, անզգամութիւն:
ԺՂՈՐԵԼ (իմ), տե՛ս ԺԽՈՐԵԼ (իմ):
ԺՄԵՐՏ, ա. Յանդուգն, ժպիրհ:
ԺՄԵՐՏԵԼ (իմ), չբ. Յանդուգնել, ժպիրհել:
ԺՄՏԵԼ (իմ), տե՛ս ԺՊՏԵԼ (իմ):
ԺՈՂԽԵԼ (իմ), չբ. Նեխել, հոտել:
ԺՈՂՈՎ, գ. 1. Ժողովումն, հաւաքումն: 2. Կոյտ, կուտակ, կուտակումն: 3. Զոկ, երամ, հոյլք: 4. Ժողովուրդ, ամբոխ, բազմութիւն: 5. Համախոհութիւն, միաբանութիւն: 6. Աղմուկ, վրդով: 7. (եկեղց.) Եղբայրութիւն, եղբայրանոց, վանք: 8. Տօնախմբութիւն, հանդէս: 9. Ժողովարան, ժողովրդանոց (հրեաների): 10. ա. Ամփոփ, կծկեալ, հոծ:
ԺՈՂՈՎԱԿԱՆ, ա. Սիւնհոդոսական:
ԺՈՂՈՎԱԿԻՅ ԼԻՆԵԼ. Համախմբել (միասին՝ մէկտեղ հաւաքուել):
ԺՈՂՈՎԱՆՈՅ, գ. 1. Ժողովարան: 2. Եկեղեցի:
ԺՈՂՈՎԱՐԱՆ, գ. 1. Հանդիսարան, խորհրդարան, ատեան: 2. Բնակարան, օթեան: 3. Եկեղեցի, աղօթատուն: 4. Ժողովող, ժողովիչ:
ԺՈՂՈՎԱՐԱՐ, ա. գ. Խոովարար:
ԺՈՂՈՎԵԼ, նբ. 1. Հաւաքել, դումարել, խմբել, կուտել, ամփոփել, բովանդակել: 2. Քաղել (ընտրութեամբ հաւաքել): 3. Ընդունել, հիւրընկալել: 4. Համահաւաքել, համախմբել: 5. Հաւաքարանել, իմաստասիրել:

ԺՈՂՈՎԵՏՂ, գ. 1. Ժողովարան, յարկ: 2. Ժողովրդանոց (հրեաների ժողովարան): 3. Եկեղեցի, աղօթատուն:

ԺՈՂՈՎԻԶ, ա. Ժողովող, հաւաքիչ:

ԺՈՂՈՎՈՂ, տե՛ս ԺՈՂՈՎԻԶ:

ԺՈՂՈՎՈՒՄՆ, գ. Ժողով (ժողովելը, ժողովուելը):

ԺՈՂՈՎՈՒՐԴ, գ. 1. Ազգ, ազն: 2. Ժողով, բազմութիւն, մարդկութիւն, մարդիկ: 3. Ամբոխ, ուսմիկ, խառնադանջ: 4. Գերդաստան: 5. Ժողովրդական, աշխարհիկ: 6. Ժողովարան, ժողովրդանոց (հրեաների):

ԺՈՂՈՎՐԴԱԲՆԱԿ, ա. Մարդաբնակ:

ԺՈՂՈՎՐԴԱԳՆՈՒՄ, գ. Ժողովրդապետ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ա. Առաջնորդական:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, գ. Աշխարհական, աշխարհիկ (հակադրութեամբ հոգեւորականի):

ԺՈՂՈՎՐԴԱՆՈՅ, գ. 1. Ժողովարան (հրեաների): 2. Եկեղեցի, տաճար:

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ, գ. Ժողովրդագլուխ (հրեաների ժողովրդանոցի գլխաւորը):

ԺՈՅԺ ՈՒՆԵԼ (իմ), չբ. Ժուժալ, ժուժել, ժուժկալիլ, տոկալ, համբերել, հանդուրժել, դիմանալ, տանել, զդէմ ունել:

ԺՈՒԱՅԹԵԼ (իմ), տե՛ս ՇՈՒԱՅՏԵԼ (իմ):

ԺՈՒԺԱԼ, ժՈՒԺԵԼ, տե՛ս ԺՈՅԺ ՈՒՆԵԼ (իմ):

ԺՈՒԺԿԱԼ, ա. 1. Պարկեշտ, զգաստ, չափաւոր, ողջախոհ: 2. Պահացող, սակաւապէս: 3. Տոկուտ, համբերող, համբերատար, ուժեղ, պնդակազմ, զօրաւոր, քաջ: - ԺՈՒԺԿԱԼ ԼԻՆԵԼ՝ ԿԱԼ, տե՛ս ԺՈՅԺ ՈՒՆԵԼ (իմ) և ԺՈՒԺԿԱԼԵԼ:

ԺՈՒԺԿԱԼԱԲԱՐ, տե՛ս ԺՈՒԺԿԱԼԱՊԷՍ:

ԺՈՒԺԿԱԼԱԿՈՅՆ, ա. Պնդազոյն (աւելի ժուժկալ):

ԺՈՒԺԿԱԼԱԿԱՆ, ա. Ճգնողական:

ԺՈՒԺԿԱԼԱՊԷՍ, մ. Ժուժկալաբար, պընդապէս, արիւարար:

ԺՈՒԺԿԱԼԵԼ, չբ. 1. տե՛ս ԺՈՅԺ ՈՒ-

ՆԵԼ (իմ): 2. Զօրանալ, պինդ կալ, պնդել զանձն: 3. Հրաժարել (ինքն իրեն զապել): ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. 1. Համբերութիւն, ըմբերութիւն, պնդութիւն, արութիւն: 2. Զափաւորութիւն, սակաւապիտութիւն, պարկեշտութիւն, պահացողութիւն, ճրգնութիւն:

ԺՊԻՏ, գ. Ժպտումն:

ԺՊԻՐՀ, ա. Անամօթ, լիբբ, լրբենի, անպատկառ, յանդուգն, ժմերտ:

ԺՊՏԵԼ (իմ), չբ. Ժմտել:

ԺՊՏՈՒՄՆ, գ. Ժպիտ (ժպտալը):

ԺՊՐՀԵԼ (իմ), չբ. Յանդգնել, իշխել, համարձակել, ժտել:

ԺՊՐՀԵՐԵՍ, ա. Ժպիրհ (ժպիրհ երեսով):

ԺՊՐՀՈՒԹԻՒՆ, գ. Յանդգնութիւն, լրբութիւն, անամօթութիւն, համարձակութիւն:

ԺՏԵԼ¹, չբ. 1. Թախանձել, աղաչել, պաղատել, աղերսել: 2. չբ. տե՛ս ԺՏԵԼ² (իմ):

ԺՏԵԼ² (իմ), չբ. 1. Իշխել, յանդգնել, համարձակել, ժպրհել, անամօթել: 2. հբ. տե՛ս ԺՏԵԼ¹:

ԺՏԵՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Համարձակեցուցանել (ժտել տալ):

ԺՏՈՒԹԻՒՆ, գ. 1. Պաղատ, պաղատանք, թախանձանք, աղերսանք: 2. Համարձակութիւն, անամօթութիւն:

ԺՐԱԳՆՈՒՄ, ա. Արի, առաքինի, անձանձրոյթ, անձանձիր, փութկոտ, ժրջան, գործասէր, գործունեայ, գործօնեայ: ԺՐԱԿԱՆ, ա. Ժիր, արի:

ԺՐԱՆԱԼ, չբ. Արիանալ, զօրանալ, ժուժկալիլ, տոկալ:

ԺՐԱՆՁՆԱԿ, ա. Ժիր, ժրագլուխ, գործունեայ:

ԺՐԱՋԱՆ, ա. Ժիր, անխոնջ, անձանձիր:

ԺՐԱՍԷՐ, ա. Ժրջան, գործասէր:

ԺՐԱՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Զօրացուցանել, քաջալերել (ժիր դարձնել):

ԺՐԵԼ, (իմ), տե՛ս ԺՐԱՆԱԼ:

ԺՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Պնդութիւն, արիութիւն: 2. Փոյթ, ջանասիրութիւն, երկասիրութիւն, աշխատասիրութիւն:

Ի

Ի ԲԱՐՁՈՒՍՏ, տե՛ս ԲԱՐՁՈՒՍՏ:
Ի ԲԱՅՅՂ, մ. ՅԱՅՏՆԱՊԷՍ (տե՛ս ԲԱՅ):
Ի ԲԱՅՅՂ, մ. 1. Հեռի, մեկուսի: 2. Յետ, յետս, անդրէն: 3. Ի դուրս, արտաքս:
- Ի ԲԱՅ ԱՌՆԵԼ. Հեռացուցանել, օտարացուցանել:
- Ի ԲԱՅ ԱՌՆՈՒԼ, Ի ԲԱՅ ԲԱՌՆԱԼ, տե՛ս ԲԱՅԱԲԱՌՆԱԼ:
- Ի ԲԱՅ ԲԱՐՁՈՒՄԵՆ, տե՛ս ԲԱՅԲԱՐՁՈՒՄԵՆ:
- Ի ԲԱՅ ԴԱՌՆԱԼ. 1. Դառնալ, յետս դառնալ, վերադարձել: 2. Յետս կալ, Հրաժարել:
- Ի ԲԱՅ ԹՈՂԱՅՈՒՑԱՆԵԼ. Թոյլ տալ:
- Ի ԲԱՅ ԿԱԼ. Յետս կալ, ի բաց դառնալ:
- Ի ԲԱՅ ԿԱՅՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԲԱՅԱԿԱՅՈՒՑԱՆԵԼ:
Ի ԲԱՅԵԱՅ, նխդ. մ. ա. Հեռի, մեկուսի: 2. Ի բացուստ, ի Հեռատանէ: 3. Բացօթեայ:
Ի ԲԱՅԷ, տե՛ս ԲԱՅԷ:
Ի ԲԱՅԷ Ի ԲԱՅ, տե՛ս ԲԱՅԷ Ի ԲԱՅ:
Ի ԲԱՅ ԸՆԿԵՑԻԿ, տե՛ս ԲԱՅԸՆԿԵՑԻԿ:
Ի ԲԱՅԻ, տե՛ս ԲԱՅ-ի տակ:
Ի ԲԱՅՈՒՍՏ, տե՛ս ԲԱՅՈՒՍՏ:
Ի ԲԱՅ ՏԱՐ, մ. ձ. Քա՛լ լիցի, քա՛լ քեզ՝ ի քէն, փարզաստ:
Ի ԲԱՅ ՓԱԽՁՈՂԱԿԱՆ, ա. Ջգուշողական:
ԻԲԻԴ, տե՛ս Քաջահալ:
Ի ԲՆԷ, տե՛ս ԲՈՒՆ-ի տակ:
ԻԲԲ, 1. նխդ. Իբբև, որպէս, պէս, նման: 2. մ. չ. Իբբու, ըստ որում, գոր օրինակ: 3. մ. Յորժամ, մինչ, մինչև, երբ: 4. եղբ. Ջիւ՞րբ, վասն է՞ր: 5. չ. Իբբ թէ, որպէս թէ: 6. չ. (յուճաբանութեամբ) Որպէս զի, որ:
- ԻԲԲ ԱՅՆ ԹԷ, ԻԲԲ ԵԹԷ, ԻԲԲ ԹԷ, տե՛ս ԻԲԲԵՒ ԱՅՆ ԹԷ:
- ԻԲԲ ՁԻ, չ. 1. Իբբև զի, որովհետև,

քանզի, վասն զի: 2. (յուճական ոճով) Մինչ զի, մինչև: 3. Իբբ թէ, որպէս թէ:
- ԻԲԲ ՈՋ ԵԹԷ, ԻԲԲ ՈՋ ԹԷ, տե՛ս ԻԲԲԵՒ ՈՋ ԵԹԷ:
ԻԲԲԵՒ, 1. նխդ. Իբբ, որպէս, նման, պէս: 2. մ. Յորժամ, մինչ, երբ: 3. (յուճական և լատինական ոճով) Յետ որոյ: 4. մ. չ. Իբբու, որպէս, ըստ որում, գոր օրինակ: 5. չ. Որպէս թէ, իբբ թէ, գրեթէ: 6. չ. Որովհետև, իբբև զի, իբբ զի, վասն զի, քանզի:
- ԻԲԲԵՒ ԱՅՆ ԹԷ, ԻԲԲԵՒ ՁԻ ԹԷ, ԻԲԲԵՒ ԹԷ, չ. Իբբ այն թէ, իբբ եթէ, իբբ թէ, իբբու այն թէ, իբբու եթէ, իբբու թէ, որպէս թէ:
- ԻԲԲԵՒ ՁԻ, տե՛ս ԻԲԲ ՁԻ (1, 2):
- ԻԲԲԵՒ ՈՋ ԹԷ, չ. Իբբ ոչ եթէ, իբբ ոչ թէ:
ԻԲԲՈՒ, տե՛ս ԻԲԲ, ԻԲԲԵՒ:
- ԻԲԲՈՒ ԱՅՆ ԹԷ, ԻԲԲՈՒ ԵԹԷ, ԻԲԲՈՒ ԹԷ, տե՛ս ԻԲԲԵՒ ԱՅՆ ԹԷ:
ԻԲԲ ՕՐԻՆԱԿ ԻՄԵՆ, ԻԲԲՈՒ ՕՐԻՆԱԿ ԻՄԵՆ, տե՛ս ՕՐԻՆԱԿ ԻՄԵՆ:
ԻԳ, տե՛ս ԷԳ:
ԻԳԱԳՈՅՆ, ա. Տկարագոյն (էգի նման), թուլագոյն, մեղկագոյն:
ԻԳԱԽԱՁՈՒԹԻԻՆ, տե՛ս ԻԳԱՄՈՒՈՒԹԻԻՆ:
ԻԳԱԿԱՆ, ա. 1. Կնոջական, կանացի: 2. Մեղկ, կնամարդի, թուլամորթ:
- ԻԳԱԿԱՆ, գ. էգ, կին, կին մարդ:
ԻԳԱՄՈՒ, ա. Իգամոլի, իգասէր, իգատենչ, կնամոլ, կնասէր:
ԻԳԱՄՈՒԵԼ (իմ), չբ. Իգամոլ լինել, մոլել:
ԻԳԱՄՈՒԼ, տե՛ս ԻԳԱՄՈՒ:
ԻԳԱՄՈՒՈՒԹԻԻՆ, գ. Իգախազութիւն, պագշտութիւն:
ԻԳԱՆԱԼ, չբ. Կնատել, թուլանալ, մեղկանալ:
- ԻԳԱՅԵԱԼ, տե՛ս ԻԳԱՍԷՐ (2):
ԻԳԱՍԷՐ, ա. 1. Կնասէր, կնոջասէր, ցանկասէր, իգատենչ, իգամոլ: 2. Իգացեալ (տղամարդ):
ԻԳԱՏԵՆՏ, ա. Իգասէր, իգամոլ:
ԻԳԱՅՈՒԹԻԻՆ, գ. Իգութիւն (իգանալը,

էգի դեր կատարելը):
ԻԳԱՅՈՒՅԱՆՆԵԼ, պբ. 1. Խենեկացուցանել,
թուլացուցանել, մեղկացուցանել: 2. Ներ-
քինացուցանել:
ԻԳՈՒԹԻԻՆ, գ. 1. Կնութիւն (էգի յատ-
կութիւն): 2. տե՛ս ԻԳԱՅՈՒԹԻՆ:
Ի ԴԷՄՍ, տե՛ս ԴԷՄ-ի տակ:
Ի ԴԷՊ, տե՛ս ԴԷՊ-ի տակ:
Ի ԴՈՒՐՍ, տե՛ս ԴՈՒՐՔ-ի տակ:
Ի ԶՈՒՐ, տե՛ս ԶՈՒՐ:
ԻԺ, գ. 1. (Կենդբ.) Օձ, քարբ: 2. ա. փխբ.
Իժանման, ժանտ:
ԻԺԱԲԱՐ, մ. Չարաբար, նենդաբար:
ԻԺԱԲԱՐՈՅ, ա. Չարաբարոյ, ժանտ:
ԻԺԱԹՈՅՆ, ա. Չարաթոյն, վնասակար,
ժանտ:
ԻԺԱՆԱԼ, չբ. Օձանալ, փխբ. չարանալ:
ԻԺԱՆՄԱՆ, ա. Օձակերպ, դժնդակ,
ժանտ:
ԻԼ, գ. Իլիկ, մանելիք, մանոց, աղէկատ:
ԻԼԻԿ, տե՛ս ԻԼ:
Ի ԽԺԴԱՆ ԿԱԼ, չբ. Յամառել, հակա-
ռակել, խտանալ:
ԻՂՁ¹, գ. 1. Բաղձանք, տենչ, տենչանք,
ցանկութիւն, փափագ: 2. Աղաչանք,
աղօթք:
- ԻՂՁ ԱՌՆԵԼ. Աղօթել:
- ԻՂՁ ԼԻՆԵԼ. Փափագել, ըղձալ:
ԻՂՁ², գ. 1. Ըղձապատում, հարցուկ, կա-
խարդ, դիւթ: 2. յոգն. Ըղձութիւն,
դիւթութիւն, գուշակութիւն, հմայութիւն,
հմայք:
ԻՄԱՆԱԼ, չբ. 1. Ի միտ առնուլ, գիտել,
գիտենալ, ճանաչել, խելամուտ լինել,
խելամտել: 2. Զգալ: 3. Խորհել, գմտա-
ածել: 4. Համարել, վարկանել, կարծել: 5.
Հնարել, ճարտարել, նիւթել:
ԻՄԱՆԱԼԱԲԱՐ, մ. Իմանալապէս, հո-
կեպէս:
ԻՄԱՆԱԼԱՊԷՍ, տե՛ս ԻՄԱՆԱԼԱԲԱՐ:
ԻՄԱՆԱԼԻ, ա. 1. Աննիւթ, աննիւթական,
հոգեղէն: 2. Իմացող, իմացական, մտաւոր:

ԻՄԱՆՈՂ, ա. Իմացող, իմացական,
մտաւոր:
ԻՄԱՆՈՂԱԿԱՆ, ա. Իմացողական:
- ԻՄԱՆՈՂԱԿԱՆՆ, գ. Իմացողական,
միտք:
ԻՄԱՍՏ, գ. 1. Նշանակութիւն, միտք: 2.
Իմացումն, իմացողութիւն, իմացակա-
նութիւն, ըմբռնողութիւն, ծանօթութիւն,
հասողութիւն: 3. Իմաստութիւն, գի-
տութիւն, մակացութիւն: 4. Ճարտա-
րութիւն, արուեստգիտութիւն: 5. Խոր-
հուրդ, խոկումն, մտածութիւն:
ԻՄԱՍՏԱԲԱՆ, ա. Իմաստնաբան, իմաս-
տուն:
ԻՄԱՍՏԱԲԱՐ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱԲԱՐ:
ԻՄԱՍՏԱԳՈՅՆ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱԳՈՅՆ:
ԻՄԱՍՏԱԼԻՅ, ա. Իմաստաւոր, խոհակա-
նալիք, իմաստայեղջ:
ԻՄԱՍՏԱԽՆԴԻՐ, ա. Իմաստնախնդիր
(իմաստութեան հետամուտ):
ԻՄԱՍՏԱԽՈՂ, տե՛ս ԻՄԱՍՏԱԽՈՐՀ:
ԻՄԱՍՏԱԽՈՐՀ, ԻՄԱՍՏԱԽՈՐՀՈՒՐԴ, ա.
Իմաստախոհ, խոհական, խելացի:
ԻՄԱՍՏԱԿ, ա. 1. Բանավաճառ, իմաս-
տասիրակ, իմաստուն, սոփեստէս: 2. Ի-
մաստական (իմաստակին յատուկ՝ վե-
րաբերող):
ԻՄԱՍՏԱԿԱՆ, ա. 1. Իմաստուն, խելացի:
2. տե՛ս ԻՄԱՍՏԱԿ (2):
ԻՄԱՍՏԱԿԱՆՈՒԹԻՆ, տե՛ս ԻՄԱՍՏԱ-
ԿՈՒԹԻՆ:
ԻՄԱՍՏԱԿԵԼ, տե՛ս ՃԱՐՏԱՐԵԼ (1):
ԻՄԱՍՏԱԿԻՐ, ա. Խոհական, բանական,
իմաստուն:
ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՆ, գ. Իմաստականու-
թիւն (իմաստակ լինելը):
ԻՄԱՍՏԱՀԱՅԵԱՅ, ա. Խոհական:
ԻՄԱՍՏԱՀԱՆՃԱՐ, ա. Իմաստայեղջ,
իմաստալիջ:
ԻՄԱՍՏԱՃԵՄ, ա. Բանիբուն, իմաս-
տակիր:
ԻՄԱՍՏԱՅԵՂՅ, ա. Իմաստալիջ:

ԻՄԱՍՍԱՆԱԼ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱՆԱԼ:
ԻՄԱՍՍԱՊԱՏՈՒՄ, ա. Իմաստալից:
ԻՄԱՍՍԱՊԱՐԳԵՒ, ա. Իմաստարար,
իմաստատուր:
ԻՄԱՍՍԱՊԷՍ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱՐԱՐ:
ԻՄԱՍՍԱՍԷՐ, ա գ. 1. Գիտուն, փիլի-
սոփայ, փիլիսոփոս: 2. Առաքինի, պար-
կեշտ, զգաստ, զգօն: 3. Երգիչ, երաժիշտ:
4. Առաքինական:
ԻՄԱՍՍԱՍԻՐԱՐԱՐ, մ. 1. Իմաստասիրա-
պէս: 2. Առաքինաբար:
ԻՄԱՍՍԱՍԻՐԱԿ, ա. 1. Իմաստասէր
(իմաստութիւն սիրող, իմաստութեան
հետամուտ): 2. Իմաստակ: 3. Իմաս-
տասիրական:
ԻՄԱՍՍԱՍԻՐԱԿԱՆ, ա. Փիլիսոփայա-
կան (իմաստասէրին և իմաստասիրու-
թեան յատուկ՝ վերաբերող):
ԻՄԱՍՍԱՍԻՐԱՆԱԼ, չբ. Առաքինանալ
(իմաստասէր՝ առաքինի դառնալ):
ԻՄԱՍՍԱՍԻՐԱՊԷՍ, տե՛ս ԻՄԱՍՍԱ-
ՍԻՐԱՐԱՐ:
ԻՄԱՍՍԱՍԻՐԵԼ, նբ. չբ. 1. Փիլիսոփայել
(իբրև իմաստասէր քննել): 2. (տրամ.)
Հաւաքաբանել: 3. Գուշակել, իմանալ: 4.
Հետաքննի լինել, խորամուտ լինել: 5.
Հնարել, հայթայթել: 6. Ճառել, վար-
դապետել:
ԻՄԱՍՍԱՍԻՐՈՒԹԻԻՆ, գ. 1. Փիլիսոփա-
յութիւն: 2. Իմաստութիւն, իմաստ: 3.
Քաղաքավարութիւն (առաքինի վարք):
ԻՄԱՍՍԱՍՊԱՌ, ա. Անիմաստ, անմիտ:
ԻՄԱՍՍԱՏՈՒՐ, ա. Իմաստնարար,
իմաստնացուցիչ:
ԻՄԱՍՍԱՐԱՐ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱՐԱՐ:
ԻՄԱՍՍԱՅՈՒՅԱՆԵԼ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱ-
ՅՈՒՅԱՆԵԼ:
ԻՄԱՍՍԱՅՈՒՅԻԶ, տե՛ս ԻՄԱՍՏ-
ՆԱՅՈՒՅԻԶ:
ԻՄԱՍՍԱԻՈՐ, ա. Իմաստալից:
ԻՄԱՍՏՆԱՐԱՆ, տե՛ս ԻՄԱՍՍԱՐԱՆ:
ԻՄԱՍՏՆԱՐԱՐ, մ. Իմաստաբար:

ԻՄԱՍՏՆԱԳԻԻՏ, ա. Հնարագիւտ, հնա-
րագէտ, հնարիմաց, ճարտարիմաց:
ԻՄԱՍՏՆԱԳՈՅՆ, ա. 1. Գիտնագոյն: 2.
Խոհականագոյն: 3. Խորագիտագոյն: 4.
Զգօնագոյն, զգաստագոյն: 5. Իմաս-
տաւոր: 6. մ. Խոհականագոյնս:
ԻՄԱՍՏՆԱԶՕՐ, ա. Իմաստուն, իմաս-
տաւոր:
ԻՄԱՍՏՆԱԽՆԴԻՐ, տե՛ս ԻՄԱՍՍԱ-
ԽՆԴԻՐ:
ԻՄԱՍՏՆԱԽՈՐՀ, տե՛ս ԻՄԱՍՍԱԽՈՐՀ:
ԻՄԱՍՏՆԱԿԱՆ, ա. Իմաստաւոր, խոհա-
կան, բանական, իմաստասիրական:
ԻՄԱՍՏՆԱՆԱԼ, չբ. 1. Իմաստնալ
(իմաստուն՝ խելացի՝ խելօք դառնալ): 2.
Խելամուտ լինել, խելամտել, իմանալ, ի
միտ առնուլ: 3. Իմաստասիրանալ,
առաքինանալ, զգօնանալ, զգաստանալ:
ԻՄԱՍՏՆԱՍԷՐ, տե՛ս ԻՄԱՍՍԱՍԷՐ:
ԻՄԱՍՏՆԱՐԱՆ, գ. Գլուխ (խելքի տեղը):
ԻՄԱՍՏՆԱՐԱՐ, ա. Իմաստարար,
իմաստնացուցիչ:
ԻՄԱՍՏՆԱՅՈՒՅԱՆԵԼ, պբ. Իմաստուն
առնել, իմաստացուցանել, զգօնացու-
ցանել, զգաստացուցանել:
ԻՄԱՍՏՆԱՅՈՒՅԻԶ, ա. 1. Իմաստնարար:
2. Զգաստացուցիչ:
ԻՄԱՍՏՆԱԻՈՐ, ա. Իմաստուն, իմաստա-
ւոր, խելացի:
ԻՄԱՍՏՆԱԻՈՐԵԼ (իմ), չբ. Իմաստնանալ,
զգաստանալ:
ԻՄԱՍՏՈՒԹԻՆ, գ. 1. Հանճար, խելք,
գիտութիւն, խոհանակութիւն, բանակա-
նութիւն, իմացողութիւն, իմացակա-
նութիւն, իմացութիւն, ճանաչողութիւն,
մակացութիւն, խելամտութիւն, ճարտա-
րութիւն: 2. Խորհուրդ, մտածութիւն:
- ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ, մ. Իմաստնաբար,
խելօք:
ԻՄԱՍՏՈՒՆ, ա. 1. Մտաւոր, գիտուն: 2.
Ընդհանրապէս՝ խոհեմ, խելացի, ուշիմ,
ողջամիտ, խելամուտ, հանճարեղ: 3.

իմաստասէր, փրկիստփայ: 4. Իմաստակ, սոփեստէս: 5. Իմաստնական, խոհական, իմաստաւոր: 6. Արդար, առաքինի, բարեպաշտ: 7. մ. Իմաստնաբար, իմաստութեամբ:

- ԻՄԱՍՏՈՒՆ ԱՌՆԵԼ, տե՛ս ԻՄԱՍՏՆԱՅՈՒՅՄԱՆԵԼ:

ԻՄԱՐՄԷՆ, ԻՄԱՐՄԻՆ, տե՛ս ԻՄԱՐՄԻՆԷ:

ԻՄԱՐՄԻՆԷ, գ. Բարտ, վիճակ, ճակատագիր:

ԻՄԱՅ, մանաւանդ՝ ԻՄԱՅՔ, գ. Իմացումն, իմաստ, խորհուրդ, միտք:

- ԻՄԱՅ ԱՌՆԵԼ, տե՛ս ԻՄԱՅՈՒՅՄԱՆԵԼ:

- ԻՄԱՅ ԼԻՆԵԼ. Իմանալ, տեղեկանալ:

ԻՄԱՅԱԳՈՅՆ, ա. Խորիմաց:

ԻՄԱՅԱԿԱՆ, ա. 1. Իմանալի, իմանողական, իմացողական: 2. Իմացող:

- ԻՄԱՅԱԿԱՆՔ, գ. յոգն. Հրեշտակք, Հոգեղէնք:

ԻՄԱՅԱԿԱՆԱՊԷՍ, մ. Հոգեպէս, Հոգեւորապէս:

ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Իմացողութիւն, իմացումն:

ԻՄԱՅՈՂ, ա. Իմաստուն (որ իմանում է):

ԻՄԱՅՈՂԱԲԱՐ, մ. Իմացականապէս (իմանալի կերպով):

ԻՄԱՅՈՂԱԿԱՆ, ա. Մտաւորական, իմացական:

- ԻՄԱՅՈՂԱԿԱՆՆ, գ. Միտք, խորհուրդ:

ԻՄԱՅՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ըմբռնումն, Ըմբռնողութիւն, իմացականութիւն:

ԻՄԱՅՈՒՄ, գ. 1. Իմացումն, իմացողութիւն: 2. Միտք, խելք: 3. Իմաստ (խօսքի նշանակութիւն): 4. Խոհականութիւն, իմաստութիւն: 5. Ազգումն, Ըմբռնումն (զգայարանների միջոցով):

ԻՄԱՅՈՒՄՈՒԹԻՒՆ, գ. Իմացութիւն, միտք:

ԻՄԱՅՈՒԹԻՒՆ, գ. 1. Իմացումն, Ըմբռնումն, իմացողութիւն, խոկումն: 2. Իմաստ, իմացուած, նշանակութիւն

(խօսքի): 3. Միտք: 4. Ազգումն, զգայութիւն (Ըմբռնում զգայարանների միջոցով): 5. յոգն, Հրեշտակք, իմանալիք, Հոգեղէնք:

ԻՄԱՅՈՒՄՆ, գ. 1. Իմացութիւն, Ըմբռնումն, Հասողութիւն: 2. Խոկումն, մտածութիւն: 3. Խորհուրդ, Հնարք, դիտաւորութիւն: 4. Զգայութիւն, Ըմբռնումն (մտքով կ զգայարանների միջոցով):

ԻՄԱՅՈՒՅՄԱՆԵԼ, պր. 1. Իմաց առնել, խելամուտ առնել, ուսուցանել: 2. Ազգ առնել, ծանուցանել, զելուցանել, յայտ առնել:

ԻՄԱՅՔ, տե՛ս ԻՄԱՅ:

Ի ՄԷՋ, Ի ՄԻՋԻ, տե՛ս ՄԷՋ:

Ի ՄԻԱՍԻՆ, մ. Միբբան, զուգաց, միասնաբար, միանգամայն:

- Ի ՄԻԱՍԻՆ ԷՎԿԱՆ Կամ ՄԻԱՍԻՆ ԷՎԿԱՆ. Միասնակէտ, Համադոյ:

ԻՄՆ, գ. 1. Ինչ: 2. Ոմն, ոք:

- ԻՄՆ ԻՄՆ. Ինչ ինչ, քանի մի, պէսպէս:

ԻՄՆԱՊԷՍ, ԻՄՆԷ, մ. Ըստ իրիք:

ԻՄՈՎՍԱՆՆ, մ. Ըստ կարի իմում:

ԻՆԾ, ԻՆՁ, գ. (կենդր.) Յովազ:

ԻՆՆԱԳԼԽԻ, ա. Իննազուլխ:

ԻՆՆԱԳԼՈՒԽ, տե՛ս ԻՆՆԱԳԼԽԻ:

ԻՆՆԱՄԵԱՅ, ա. Իննամեան:

ԻՆՆԱՄԵԱՆ, տե՛ս ԻՆՆԱՄԵԱՅ:

ԻՆՆԵՐԵԱԿ, տե՛ս ԻՆՆԵՐՈՐԴ:

ԻՆՆԵՐՈՐԴ, թ. Իններեակ:

ԻՆՆԵՏԱՍԱՄԵԱՅ, ա. Իննուտասնամեայ:

ԻՆՆԵՏԱՍԵՐԵԱԿ, տե՛ս ԻՆՆԵՏԱՍԵՐԵԱԿ:

ԻՆՆԵՏԱՍԵՐԵԱԿ, ա. գ. Իննուտասնեակ:

ԻՆՆԵՏԱՍԵՐՈՐԴ, թ. Իննուտասներորդ:

ԻՆՆԵՔԵԱՆ, թ. Իններին:

ԻՆՆԵՔԻՆ, տե՛ս ԻՆՆԵՔԵԱՆ:

ԻՆՆՈՒՏԱՍԱՄԵԱՅ, տե՛ս ԻՆՆԵՏԱՍԱՄԵԱՅ:

ի են ՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ, տե՛ս Ի ն Ե Ե Ի-
ՏԱՍՆԵՐՈՐԴ:
Ի ն Ս ն Ա Մ Ե Ա Յ, ա. Ի ն ն ս ն մ ե հ ա ն, Ի ն ն ս ը ն-
ա մ ե ն Ի:
Ի ն Ս ն Ա Մ Ե Ա ն, Ի ն Ս ն Ա Մ Ե ն Ի, տե՛ս
Ի ն Ս ն Ա Մ Ե Ա Յ:
Ի ն Ս ն Ե Ա Կ, ա. Ի ն ն ս ն եր ե հ Կ:
Ի ն Ս ն Ե Մ Ե Ա Յ, Ի ն Ս ն Ե Մ Ե Ա ն, տե՛ս
Ի ն Ս ն Ա Մ Ե Ա Յ:
Ի ն Ս ն Ե Ր Ե Ա Կ, տե՛ս Ի ն Ս ն Ե Ա Կ:
Ի ն Չ¹, գ. 1. Ի մ ն, մ Ի (գ ո յ ա կ ա ն Ի չ հ ե ո ե տ ա-
դ ա ս գ ո ը ծ ա ծ ու թ ե հ մ ը կ ա տ ա ը ու մ է
ա ն ո ը ը շ գ եր ա ն ու ա ն գ եր՝ Ի ն չ- ո ը, ո ը կ է
ն շ.): 2. գ. Ի ը Ի ն չ (մ Ի բ ա ն, ո ը կ է բ ա ն):
- Ի ն Չ Ի ն Չ, տե՛ս Ի Մ ն Ի Մ ն:
Ի ն Չ², գ. 1. Գ ո յ. գ ո յ ա կ. գ ո յ ա գ ու թ Ի ն: 2.
տե՛ս Ի ն Չ Ք:
Ի ն Չ Կ Ա Ա ն Ո Ւ Թ Ի Ի ն, գ. Վ եր ա բ եր ու թ Ի ն,
ա ո ի ն չ:
Ի ն Չ Պ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի ն, տե՛ս Զ Ի ն Չ Պ Ի-
Տ Ո Ւ Թ Ի Ի ն:
Ի ն Չ Ք, գ. Գ ո յ ը, ս տ ա գ ու ա ծ:
Ի ն Ք ն, գ. 1. ն ա: 2. ա. (յ ու ն ա բ ա-
ն ու թ ե հ մ ը) ն ո յ ն, բ ո՛ւ ն:
- Ի ն Ք ե Ա Մ Ր, Ի ն Ք ե Ա Մ Ր Ի ն Ք ե Ա ն, Ի ն-
Ք ե Ա ն Ք Ի ն Ք ե Ա Մ Ր Ք, մ. Ի ն ը ն Ի ն, ա ն-
ձ ա մ ը ա ն ձ Ի ն:
- Ի ն Ք ն Ա Ռ Ի ն Ք ն, Ի ն Ք ն Յ Ի ն Ք ն, մ.
Ի ն Ք ն Ի ն:
- Ի ն Ք ն Ը Ս Տ Ի ն Ք ե Ա ն, մ. է ա պ է ս,
Ի ն ը ն Ի ն, Ի բ ը ղ Ի:
- Ը Ս Տ Ի ն Ք ե Ա ն, տե՛ս Ի ն Ք ն Ը Ս Տ Ի ն-
Ք ե Ա ն:
- Յ Ի ն Ք ն Գ Ա Լ, տե՛ս Զ Գ Ա Ս Ս Ա ն Ա Լ (1):
Ի ն Ք ն Ա Ր Ա ն Ո Ւ Թ Ի Ի ն, տե՛ս Ի ն Ք ն Ա-
Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի ն:
Ի ն Ք ն Ա Ր Ա Ի, ա. Ա ն կ ա ը ու, ա պ ե ն Ի ա զ,
Ի ն ը ն ա բ աւ ա կ ա ն (Ի ն ը ն Ի ը ն բ աւ ա կ ա-
ն ա գ ն ո ղ՝ բ աւ ա ը ա ը ղ):
Ի ն Ք ն Ա Ր Ա Ի Ա Կ Ա ն, տե՛ս Ի ն Ք ն Ա Ր Ա Ի:
Ի ն Ք ն Ա Ր Ա Ի Ո Ւ Թ Ի Ի ն, գ. Ա ն կ ա ը ո-
ւ ու թ Ի ն, ս ա կ աւ ա պ Ի ու թ Ի ն:

Ի ն Ք ն Ա Ր Ե Ր, ա. Ի ն ը ն ա բ եր ա կ ա ն,
Ի ն ը ն ա բ ու ը լ Ի:
Ի ն Ք ն Ա Ր Ե Ր Ա Կ Ա ն, տե՛ս Ի ն Ք ն Ա Ր Ե Ր:
Ի ն Ք ն Ա Ր Ե Ա Կ, ա. Բ ն ա կ ա ն, բ ն ա ձ Ի ն:
Ի ն Ք ն Ա Ր Ե Ա Կ Ա Ր Ա Ր, մ. Բ ն ա կ ա ն ա բ ա ը, Ի
բ ն է, Ի ն ը ն Ի ն:
Ի ն Ք ն Ա Ր Ո Յ Ս, ա. Ի ն ը ն ա բ ու ը լ Ի, բ ն ա ձ Ի ն,
բ ն դ ա բ ո յ ս, Ի ն ը ն ա բ ն կ:
Ի ն Ք ն Ա Ր Ո Ւ Ղ Խ, ա. 1. Ի ն ը ն ա խ ա ղ ա գ
(Ջ ու ը): 2. Ի ն ը ն ա բ ո յ ս, Ի ն ը ն ա բ եր: 3.
Ի ն ը ն ա կ ա մ, Ի ն ը ն ա յ ը ժ ա ը, կ ա մ ա կ ա ը:
Ի ն Ք ն Ա Ր Ո Ի ն, ա. Բ ն ա ձ Ի ն, բ ն ա կ ա ն,
բ ն դ ա բ ո յ ս, բ ու ն, ս ե պ չ ա կ ա ն, յ ա տ ու կ,
բ ն Ի կ:
Ի ն Ք ն Ա Գ Ա Ի Ա Ռ Ե Ա Յ, ա. գ. Բ ն ա կ, բ ն Ի կ
(չ է ն ց ն ո յ ն գ աւ ա ո ի ց):
Ի ն Ք ն Ա Գ Ի Ր, ա. գ. Բ ն ա գ Ի ը, ձ ե ո ա գ Ի ը:
Ի ն Ք ն Ա Գ Լ Ո Ւ ն, ա. Ի ն ը ն Ի ի խ ա ն, Ի ն ը ն ա-
կ ա մ:
Ի ն Ք ն Ա Գ Ո Յ, ա. Ա ն ե ղ, ա ն ս տ ե ղ ծ,
է ա կ ա ն:
Ի ն Ք ն Ա Գ Ո Յ Ա Կ, ա. 1. Ի ն ը ն ա գ ո յ, Ի ն ը-
ն ե ղ: 2. ն ա խ ա ս տ ե ղ (ն ա խ ա պ է ս ս տ ե ղ-
ծ ու ա ծ):
Ի ն Ք ն Ա Գ Ո Ր Մ, ա. մ. 1. Ի ն ը ն Ի ի խ ա ն,
ա ն ձ ն Ի ի խ ա ն: 2. Ա շ ի ա տ ա ս է ը, փ ո յ թ,
փ ու թ ա կ ա մ, ա ն ձ ա ն ձ ը ը յ թ: 3. Ի ն ը ն ա-
գ Լ ու լ, ա ն ձ ն ա չ ա ձ: 4. Ի ն ը ն ե ղ, բ ն ա կ ա ն,
ա ն ա տ ա ձ ա ո: 5. Հ ա մ ա գ ո ը ը, գ ո ը ձ ա կ Ի յ:
Ի ն Ք ն Ա Գ Ր Ա Ի, ա. Ա ն ձ ն ա մ ա տ ն:
Ի ն Ք ն Ա Դ Է Պ, ա. Յ ա ն կ ա ը ձ ա ղ է պ:
Ի ն Ք ն Ա Դ Ի Մ Ա Ր Ա Ր, մ. Դ է մ յ ա ն ղ Ի մ ա ն,
ղ է մ Ի ղ է մ:
Ի ն Ք ն Ա Դ Ս Ո Վ, ա. Ի ն ը ն ա ն ա խ ա տ,
ա ն ձ ն ա ն ա խ ա տ:
Ի ն Ք ն Ա Դ Ր Ո Ի Ա Գ Ե Ա Լ, ա. Մ տ ա ց ա ձ Ի ն,
ա ն խ ո ը ը չ ը ղ ա բ ա ը:
Ի ն Ք ն Ա Ջ Ա Ր Դ, ա. Բ ն ա կ ա ն (Ի բ ն է
զ ա ը ղ ա ը ու ն):
Ի ն Ք ն Ա Ջ Օ Ր, ա. Ա ն ձ ն ա զ ո ը (Ի ն ը ն Ի ն
չ զ ո ը՝ կ ա ը ը ղ):
Ի ն Ք ն Ա Ժ Ա Ռ Ա ն Գ, ա. Հ ա յ ը ն Ի, Ի բ ա կ ա ն:

Ին-ՔենԱԽԱՂԱՅ, Ե. Ինքնաբուղիս (Չուր):
Ին-ՔենԱԽՈՐԺ, Ե. Ինքնակամ, Ինքնա-
յօժար:

Ին-ՔենԱԽՈՍ, Ե. Ինքնասաց:

Ին-ՔենԱԽՈՍՈՒԹԻԻՆ, Գ. Ինքնա-
բանութիւն:

Ին-ՔենԱԾԱԳ, Ե. Անեղական, աստուա-
ծային, անսկզբնական:

Ին-ՔենԱԾԻՆ, Ե. 1. Ինքնեղ: 2.
Ինքնաբոյս, Ինքնաբուղիս, բնածին,
ընդարոյս:

Ին-ՔենԱԿԱԼ, Ե. Գ. 1. Ինքնիշխան,
անձնիշխան, Ինքնագլուխ, ազատ: 2.
Թագաւոր, կայսր: 3. Ինքնակալական,
թագաւորական:

Ին-ՔենԱԿԱԼԱԿԱՆ, Ե. Կայսերական,
Ինքնիշխանական, յաղթող:

Ին-ՔենԱԿԱԼՈՒԹԻԻՆ, Գ. Թագաւո-
րութիւն (Ինքնակալ տէրութիւն):

Ին-ՔենԱԿԱՄ, Ե. 1. Ինքնայօժար, կա-
մաւոր: 2. Անձնիշխան, Ինքնիշխան,
ազատ: 3. Անձնասէր: 4. Ինքնաշարժ,
գլխաւորատրատ: 5. մ. Ինքնակա-
մութեամբ, կամաւ, կամաւորաբար:

Ին-ՔենԱԿԱՄՈՒԹԻԻՆ, Գ. Անձնիշխա-
նութիւն, կամաւորութիւն, յօժարութիւն:
- Ին-ՔենԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ, տե՛ս Ին-Քեն-
ԱԿԱՄ (5):

Ին-ՔենԱԿԱՅ, Ե. Ինքնագոյ, Ինքնեղ,
Ինքնակաց:

Ին-ՔենԱԿԱՅՈՒԹԻԻՆ, տե՛ս Ին-ՔենԱ-
ԿԱՅՈՒԹԻԻՆ:

Ին-ՔենԱԿԱՆ, Ե. 1. Իւրական: 2. Էական:
Ին-ՔենԱԿԱՆՈՒԹԻԻՆ, Գ. Նոյնութիւն:

Ին-ՔենԱԿԱՏԱՐ, Ե. 1. Ապահարգ, Ինք-
նաբաւ (Ինքն իր մէջ կատարեալ): 2. մ.
Ինքնակատարաբար, կատարելապէս,
տիրապէս:

Ին-ՔենԱԿԱՏԱՐԱԲԱՐ, մ. Կատարելա-
պէս, տիրաբար:

Ին-ՔենԱԿԱՏԱՐՈՒԹԻԻՆ, Գ. Կատարե-
լութիւն (Ինքնակատար լինելը):

Ին-ՔենԱԿԱՅ, Ե. Ինքնակայ, Ինքնեղ,
Ինքնագոյ, անեղ:

Ին-ՔենԱԿԱՅՈՒԹԻԻՆ, Գ. Ինքնակա-
յութիւն, Ինքնեղութիւն, անեղութիւն:

Ին-ՔենԱԿԻՐ, Ե. Սեպհական, իւրական,
իւրոյին:

Ին-ՔենԱԿԵՏԱՄԲԵԼԻ, Ե. Ինքնանախատ:
Ին-ՔենԱԿՈՉ, Ե. Ինքնակամ:

Ին-ՔենԱԿՈՐԾԱՆ, Ե. Անձնակորոյս:

Ին-ՔենԱՀԱԼԱԾ, Ե. Հալածական:

Ին-ՔենԱՀԱՆՏ, Ե. Անձնահան-
հաճոյ, Ինքնահաճոյ, Ինքնահայեաց,
ամբարտաւան:

Ին-ՔենԱՀԱՆՈՅ, տե՛ս Ին-ՔենԱՀԱՆՏ:

Ին-ՔենԱՀԱՆՈՅՈՒԹԻԻՆ, տե՛ս Ին-ՔենԱ-
ՀԱՆՈՅՈՒԹԻԻՆ:

Ին-ՔենԱՀԱՆՈՒԹԻԻՆ, Գ. Անձնահա-
ճութիւն, ամբարտաւանութիւն:

Ին-ՔենԱՀԱՅԵԱՅ կամ ՅԻՆ-ՔենԱ-
ՀԱՅԵԱՅ, տե՛ս Ին-ՔենԱՀԱՆՏ:

Ին-ՔենԱՀՐԱՄԱՆ, Ե. 1. Ինքնիշխան,
Ինքնակամ, մտադիւր: 2. մ. Ինքնին,
Ինքնակամութեամբ:

Ին-ՔենԱՉԵՌԻՆ, Ե. մ. 1. Ինքնագոր: 2.
Ինքնին, իւրոյի: 3. Չեռներէց, յանձնա-
պատան, յանդուգն:

- Ին-ՔենԱՉԵՌԻՆ ԼԻՆԵԼ. Չեռներէց լինել,
Համարձակել:

Ին-ՔենԱՄԱՏՈՅՅ, Ե. 1. Ինքնեղ: 2.
Ինքնադէպ: 3. Գ. Դէպք, դիպուած:

Ին-ՔենԱՄԱՐՏ, Ե. Ինքնգոր:

Ին-ՔենԱՅՈՐԴՈՐ, Ե. Ինքնայօժար, դիւ-
րապատրաստ, պատրաստական, կա-
մակար:

Ին-ՔենԱՅՈՒԹԱՐ, Ե. Յօժարական, Ինքնա-
կամ, մտադիւր, կամաւոր:

Ին-ՔենԱՆԱԼ, Ե. Կատարելանալ:

Ին-ՔենԱՆԱԽԱՏ, Ե. Անձնանախատ,
Ինքնագործող, Ինքնապարսաւ:

Ին-ՔենԱՆՄԱՆ, Ե. Համանման:

Ին-ՔենԱՇԱՐԺ, Ե. 1. Ինքնաշար-
ժողական, շարժողական, շարժուն: 2.

Մշտաշարժ, անմահ:
Ին-Քեն ԱՇԱՐԺԱԲԱՐ, մ. Անձնիշխա-
նաբար, ազատաբար:
Ին-Քեն ԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ, ա. Ինքնաշարժ,
շարժողական:
Ին-Քեն ԱՇԱՐԺՈՒԹԻԻՆ, գ. Շարժողու-
թիւն (ինքնաշարժ լինելը):
Ին-Քեն ԱՊԱՏՈՒՄ, ա. մ. Ինքնասաց:
Ին-Քեն ԱՊԱՏՐԱՍՏ, ա. Պատրաստական,
դիւրապատրաստ:
Ին-Քեն ԱՊԱՐՍԱԻ, տե՛ս Ին-Քեն Ան Ան Ան Ան:
Ին-Քեն ԱՍԱՑ, ա. Ինքնապատում, ինք-
նախօս:
Ին-Քեն ԱՍԷՐ, տե՛ս Ան Ձն ԱՍԷՐ:
Ին-Քեն ԱՍԻՐՈՒԹԻԻՆ, տե՛ս Ան Ձն Ա-
ՍԻՐՈՒԹԻԻՆ:
Ին-Քեն ԱՍՊԱՆ, տե՛ս Ան Ձն ԱՍՊԱՆ:
Ին-Քեն ԱՎԱՐ, ա. Ինքնօրէն (ինքն իրեն
կառավարող):
Ին-Քեն ԱՎԱՐԳԱՊԵՏ, ա. Ինքնավարժ,
ինքնուս:
Ին-Քեն ԱՎԱՐԺ, ա. Ինքնուս, ինքն-
ուսումն:
Ին-Քեն ԱՏԵՍ, ա. 1. Ականատես: 2.
Ինքնատեսող, խելամուտ:
- Ին-Քեն ԱՏԵՍ ԼԻՆԵԼ. Ականատես լինել:
Ին-Քեն ԱՏԵՍԱԿԱԲԱՐ, տե՛ս Ան Յե-
ՂԱԲԱՐ:
Ին-Քեն ԱՏԵՍՈՂ, տե՛ս Ին-Քեն ԱՏԵՍ (2):
Ին-Քեն ԱՏԷՐ, ա. Անձնիշխան:
Ին-Քեն ԱՏԻՐՈՒԹԻԻՆ, գ. Անձնիշ-
խանութիւն:
Ին-Քեն ԱՐԱՐ, ա. Իւրակերտ:
Ին-Քեն ԱՐԳՈՅ, տե՛ս Ան Ձն ԱՂԱՇ:
Ին-Քեն ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻԻՆ, գ. Խոնար-
հութիւն, Համեստութիւն:
Ին-Քեն ԱՒՈՐ, ա. 1. Ինքնական, իւրական,
բնաւոր: 2. Ինքնաբոյս, ինքնեակ:
Ին-Քեն ԵԱԿ, ա. 1. Ինքնաբոյս: 2. մ.
Ինքնիւն:
Ին-Քեն ԵԿ, ա. 1. Ինքնամատոյց: 2.
Ինքնադէպ:

Ին-Քեն ԵՂ, ա. 1. Ինքնածին: 2. Բնական,
անարուեստ (ի բնէ՛ բնականից եղած):
Ին-Քեն ԵՐԵԻԱԿ, ա. Յայտնի (ինքն իրեն
երեւցող):
Ին-Քեն ԷԱԿ, տե՛ս Ին-Քեն ԵԱԿ:
Ին-Քեն ԻՄՈՆ, տե՛ս ՀԵՏԱՀԱՆ (2):
Ին-Քեն ԻՆ, մ. Իւրովի, անձամբ անձին,
յանձնէ:
Ին-Քեն ԻՇԽԱՆ, ա. 1. Անձնիշխան,
ինքնատէր: 2. Անձնիշխանական: 3.
Ինքնազօր: 4. Տիրական:
Ին-Քեն ԻՇԽԱՆ ԱԲԱՐ, մ. Ինքնիշխա-
նապէս, տիրաբար:
Ին-Քեն ԻՇԽԱՆ ԱԿԱՆ, ա. Անձնիշխա-
նական, տիրական:
Ին-Քեն ԻՇԽԱՆ ԱՊԷՍ, տե՛ս Ին-Քեն ԻՇ-
ԽԱՆ ԱԲԱՐ:
Ին-Քեն ԻՇԽԱՆ ՈՒԹԻԻՆ, գ. 1. Անձն-
իշխանութիւն: 2. Ինքնակալութիւն:
Ին-Քեն ՅԱՅՏՆ ԱՊԷՍ, մ. Յայտնապէս
(ինքն իրեն յայտնելով՝ երեսն Հանելով):
Ին-Քեն ՈԳՈՐ, տե՛ս Ին-Քեն ԱՄԱՐՏ:
Ին-Քեն ՈՒԹԻԻՆ, գ. 1. Ենթակալութիւն,
անձնաւորութիւն, անձն: 2. Ինքնե-
ղութիւն: 3. Աստուածութիւն (աստուա-
ծային բնութիւն՝ իսկութիւն):
Ին-Քեն ՈՒՍ, տե՛ս Ին-Քեն ՈՒՍՈՒՄՆ:
Ին-Քեն ՈՒՍՄՆ ԱԲԱՐ, Ին-Քեն ՈՒՍՄՆ ԱԿԻ,
Ին-Քեն ՈՒՍՄՆ ԱՊԷՍ, մ. Բնաւորապէս
(ինքնուսումն լինելով):
Ին-Քեն ՈՒՍՈՒՄՆ, ա. 1. Ինքնավարժ,
ինքնավարդապետ: 2. Բնաւորական,
բնածին, ի բնէ:
Ին-Քեն ՈՒՍՈՒՄՆ ԱԿ, տե՛ս Ին-Քեն-
ՈՒՍՈՒՄՆ:
Ին-Քեն ՈՒՐՈՅՆ, ա. Իւրական, առանձին,
մասնաւոր:
Ին-Քեն ՈՒՐՈՅՆ ԱԲԱՐ, մ. Առանձնաբար,
մասնաւորապէս, ի մասնաւորի:
Ին-Քեն ՈՒՐՈՅՆ ՈՒԹԻԻՆ, գ. Առանձ-
նութիւն, միայնութիւն:
Ին-Քեն ՕՐԷՆ, ա. 1. Աղիկամի, ինքնավար:

2. Ինքնակամ: 3. Ինքնահամ, կամակար: Ին-ՔնՕՐԷՆՈՒԹԻԻՆ, տե՛ս Ին-ՔնՕՐԻՆՈՒԹԻԻՆ:

Ին-ՔնՕՐԻՆԱԿ, Ին-ՔնՕՐԻՆԱԿԱՔԱՐ, մ. Մասնաւորապէս, Ինքնուրոյնաբար: Ին-ՔնՕՐԻՆՈՒԹԻԻՆ, գ. Ինքնօրէնութիւն, աղիկամութիւն:

ԻՇԱԿԷՍ, ԻՇԱԿԻՍԻ, գ. Զորի: ԻՇԱՄԵՂՈՒ, տե՛ս ԲՐԷՏ:

ԻՇԱՄՏՐՈՒԿ, գ. Յաւանակ, մտրուկ, իշորդի:

ԻՇԱՆ, կամ ԻՇԱՆՔ, գ. յոգն. էշք: ԻՇԱՎԱՅՐ, ԻՇԱՎԱՅՐԻ, գ. (կենդբ.) Յիւ:

ԻՇԱՅՈՒԼ, գ. Յուշկապարիկ: ԻՇԽԱՆ, գ. Իշխեցող, տէր, գլուխ, գլխաւոր, պետ, աւագ, առաջնորդ, զօրավար, պարագլուխ, վերակացու, տանուտէր, նախարար:

- ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ. Իշխանապետ:

- ԻՇԽԱՆ ԼԻՆԵԼ. Իշխել:

ԻՇԽԱՆԱՔԱՐ, մ. Իշխանապէս, Ինքնիշխանաբար, իշխանականաբար, իշխանօրէն, տիրաբար:

ԻՇԽԱՆԱԳՈՅՆ, գ. Իշխանականագոյն, գլխաւորագոյն, վեհագոյն:

ԻՇԽԱՆԱԿԱՆ, ա. գ. 1. Պետական: 2. Տիրական: 3. Բացարձակ, Ինքնագոր: 4. Իշխող, գլխաւոր: 5. Առաջնորդական (միտք), միտք:

ԻՇԽԱՆԱԿԱՆԱՔԱՐ, տե՛ս ԻՇԽԱՆԱՔԱՐ:

ԻՇԽԱՆԱԿԱՆԱԳՈՅՆ, տե՛ս ԻՇԽԱՆԱԳՈՅՆ:

ԻՇԽԱՆԱԿԱՆՈՒԹԻԻՆ, գ. Իշխանութիւն:

ԻՇԽԱՆԱԿԻՆ, գ. Տիկին, իշխանուհի:

ԻՇԽԱՆԱԿԻՅ, ա. Տիրակից, Հոմիշխան:

ԻՇԽԱՆԱՆԱԼ, չբ. Իշխան լինել, իշխել, տիրել:

ԻՇԽԱՆԱՊԵՏ, գ. Իշխանաց իշխան, ամէնիշխան:

ԻՇԽԱՆԱՊԷՍ, տե՛ս ԻՇԽԱՆԱՔԱՐ:

ԻՇԽԱՆԱՍԱՍ, ա. Սպառնալից (իշխանական սաստ պարունակող): ԻՇԽԱՆԱՍԷՐ, ա. Փառասէր:

ԻՇԽԱՆԱՍԻՐՈՒԹԻՆ, գ. Փառասիրութիւն:

ԻՇԽԱՆԱՏՈՒՆ, գ. Ազգատոհմ:

ԻՇԽԱՆԱՒՈՐ, ա. Իշխեցեալ, Հպատակ: ԻՇԽԱՆՈՒԹԻՆ, գ. 1. Տէրութիւն, պետութիւն, գլխաւորութիւն, առաջնորդութիւն: 2. Պատիւ: 3. Ազատութիւն, Ինքնակամութիւն, անձնիշխանութիւն: 4. Կարողութիւն, Համարձակութիւն, Հրաման: 5. (եկեղց.) Վիճակ: 6. յոգն. Հրեշտակք:

ԻՇԽԱՆՈՒՆԻՇԻ, տե՛ս ԻՇԽԱՆԱԿԻՆ:

ԻՇԽԱՆՍԻՐՈՒԹԻՆ, տե՛ս ԻՇԽԱՆԱՍԻՐՈՒԹԻՆ:

ԻՇԽԱՆՕՐԷՆ, տե՛ս ԻՇԽԱՆԱՔԱՐ:

ԻՇԽԵԼ, չբ. և նբ. 1. Իշխան լինել, տիրել: 2. Համարձակել, յանդգնել, ժպրհել: 3. Կարել, զօրել, բաւել:

ԻՇԽԵՑԵԱԼ, տե՛ս ԻՇԽԱՆԱՒՈՐ:

ԻՇԽԵՑՈՂ, ա. գ. Իշխող, իշխան, տէր:

ԻՇԽԵՑՈՂԱԳՈՅՆ, ա. Զօրագոյն, Համարձակագոյն:

ԻՇԽԵՑՈՂԱԿԱՆ, ա. Իշխանական, իշխող: ԻՇՈՐԳԻ, տե՛ս ԻՇԱՄՏՐՈՒԿ:

ԻՋԱՆԵԼ, չբ. 1. Վայրաբերել, վայրագայել, հոսել: 2. Զիջանել, մեղմանալ, դադարել, խոնարհել: 3. Իջավանել: 4. Անկանել (անարգ վիճակի Հասնել): 5. Յաջորդել (նախորդներից սերուել): ԻՋԱՎԱՆ, գ. Վանք, օթեան:

ԻՋԱՎԱՆԵԼ (իմ), չբ. Ազանել, օթագանել, օթեանել:

ԻՋԱԻԱՆ, տե՛ս ԻՋԱՎԱՆ:

ԻՋԱԻԱՆԵԼ (իմ), տե՛ս ԻՋԱՎԱՆԵԼ (իմ): ԻՋԱԻՈՐ, ա. գ. Անցաւոր, հիւր:

ԻՋԵՎԱՆ կամ ԻՋԷՎԱՆ, տե՛ս ԻՋԱՎԱՆ:

ԻՋԵՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԻՋՈՒՑԱՆԵԼ:

ԻՋԵԻԱՆ, տե՛ս ԻՋԱՎԱՆ:

ԻՋՈՒՄՆ, գ. ԷՋ, ԷՋՔ, վայրաբերումն
(ԻՋնեյր):

ԻՋՈՒՑԱՆԵԼ, պբ. ԻՋեցուցանել, վայրա-
բերել, վայրածել:

ԻՋՈՒՑԻՉ, ա. Խոնարհեցուցիչ:

ԻՌԻՍ, տե՛ս ԻՐԻՍ:

Ի ՍԱԿՍ, տե՛ս ՍԱԿՍ:

ԻՍԿՂ, գ. 1. Իսկութիւն, իսկականութիւն,
գոյացութիւն: 2. ա. Էական, բուն, բնիկ,
ստոյգ, ճշմարիտ, հարազատ: 3. (քեր.)
Յատուկ (անուն):

ԻՍԿՂ, շ. 1. Այլ, բայց, սակայն, և: 2. Արդ,
իսկ արդ, ապա, ուրեմն: 3. շ. մ. եղբ.
Համայն, արդարև, ապաքէն, անդստին,
արդեամբք, իսկապէս, արդեօք, ևս:

ԻՍԿԱԲԱՆԵԼ, նբ. չբ. Հաւաստաբանել,
տիրաբանել, ճշգրտաբանել, ճշմար-
տել:

ԻՍԿԱԲԱՆՈՒԹԻԻՆ, գ ճշգրտաբանու-
թիւն:

ԻՍԿԱԲԱՐ, տե՛ս ԻՍԿԱՊԷՍ:

ԻՍԿԱԳՈՅՆ, ա. 1. Յատկագոյն, տի-
րագոյն, լաւագոյն: 2. մ. Իսկապէս,
տիրապէս, յատկապէս:

ԻՍԿԱԿԱՆ, ա. Էական, բուն, յատուկ,
սեպհական:

ԻՍԿԱԿԱՆՈՒԹԻԻՆ, գ. 1. Իսկութիւն: 2.
Աստուածութիւն:

ԻՍԿԱԿԻՑ, ա. (կրօն.) Էակից, գոյակից,
Համագոյակից:

ԻՍԿԱԿՅՈՒԹԻԻՆ, գ. (կրօն.) Էակցու-
թիւն, Համագոյակցութիւն, Համագո-
յութիւն:

ԻՍԿԱՊԱՏՈՒՄ, տե՛ս ձՇՄԱՐՏԱՊԱ-
ՏՈՒՄ:

ԻՍԿԱՊԷՍ, մ. Յատկապէս, առանձնապէս,
տիրապէս, ստուգապէս, հապէս:

ԻՍԿ ԱՐԴ, շ. Իսկ, արդ, ապա, ուրեմն:

ԻՍԿ ԵԹԷ, շ. Ապա եթէ, ապա թէ:

ԻՍԿ ԵՒ ԻՍԿ, մ. 1. Իսկոյն, իսկոյն իսկ,
առժամայն, նոյն հետայն: 2. Իսկապէս,
ճշմարտապէս:

ԻՍԿԶԲԱՆԷԱԿԱՆ, ա. Անսկիզբն, անեղ,
աստուածային:

ԻՍԿԻԶԲՆ, տե՛ս ՍԿԻԶԲՆ:

ԻՍԿ ԹԷ, շ. Բայց, սակայն:

ԻՍԿՈՅՆ, ԻՍԿՈՅՆ ԻՍԿ, մ. Անդէն և անդ,
իսկ և իսկ, նոյն ժամայն:

ԻՍԿՈՒԹԻԻՆ, գ. 1. Իսկականութիւն,
զինչ էն, բնութիւն, գոյացութիւն, գո-
յութիւն: 2. Ինքնութիւն, ենթակայու-
թիւն, անձնաւորութիւն: 3. Ճշմարտու-
թիւն:

ԻՍԿՈՒՀԻ, գ. Տիրուհի, թագուհի:

Ի ՍՊԱՌ, ԻՍՊԱՌ, մ. Բոլորովին, բնաւին,
բնաւիմբ:

Ի ՎԱՂԻԻՆ, տե՛ս ՎԱՂԻԻ-Ի տակ:

Ի ՎԵՐԱՅ, նիդ. 1. Վերայ: 2. Վասն,
յաղապս, ի սակ:

Ի ՏԱՐԱՊԱՐՏՈՒՑ, տե՛ս ՏԱՐԱՊԱՐ-
ՏՈՒՑ:

ԻՐ, գ. Ինչ մի, բան, խնդիր իմն, պէտք
ինչ:

ԻՐԱԳԷՏ, ա. Իրազգած, իրազեկ:

ԻՐԱԳԻՏՈՂ, տե՛ս ԻՐԱԳԷՏ:

ԻՐԱԳՈՐԾԵԼ, նբ. Առնել, կատարել,
Հայթայթել:

ԻՐԱԳՈՐԾՈՒԹԻԻՆ, գ. Իրակերտութիւն,
իրակութիւն, գործողութիւն, գործ, իրք,
արարուած, պէտք:

ԻՐԱԶԳԱԾ կամ ԻՐԱԶԳԱՅ, տե՛ս
ԻՐԱԳԷՏ:

- ԻՐԱԶԳԱԾ՝ ԻՐԱԶԳԱՅ ԼԻՆԵԼ. 1.
Իրազեկ լինել, տեղեկանալ, իմաց լինել:
2. Զգացուցանել, զեկուցանել, իմաց
առնել:

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ. 1. տե՛ս ԻՐԱԶԳԱԾ ԼԻ-
ՆԵԼ (1): 2. Հետաքնին լինել, հետա-
գոտել:

ԻՐԱԶԵԿԱԳՈՅՆ, ա. Տեղեկագոյն (աւելի
իրազեկ տեղեակ):

ԻՐԱԶԵԿՈՒԹԻԻՆ, գ. 1. Տեղեկութիւն: 2.
Հետազոտութիւն:

ԻՐԱԾԵԼ, նբ. Խորհել, մտածել:

իՐԱԿԱՆ, ա. Իրողական:
ԻՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. Կարգաւորու-
թիւն, բարեկարգութիւն:
ԻՐԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԻՐԱԳՈՐ-
ԾՈՒԹԻՒՆ:
ԻՐԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. Իրագործութիւն: 2.
Իրողութիւն, եղիւլութիւն, բան:
ԻՐԱՀԱՄԱՐՁԱԿ, ա. 2. Ձեռներէջ (որեւէ
գործում համարձակ):
ԻՐԱՆ, գ. Անձն, մարմին:
ԻՐԱՆՈՒՆՔ, տե՛ս ՔՈՒՆՔ:
ԻՐԱԿ, մ. ա. 1. Արդարացի, արդեամբք,
ստուգիւ, հաւաստեաւ, իրաւամբք: 2.
Արդար, ստոյգ, հաւաստի, դիպող, ի դէպ:
3. գ. Իրաւունք, արդարութիւն:
- ԻՐԱԿ ԱՌՆԵԼ կամ ՏԱԼ. Դատ առնել,
իրաւունս առնել:
ԻՐԱԿԱՐԱՆ, ա. 1. Ստուգաբան, արդար-
բարս, ճշմարտաբարս: 2. Արդարացի
(իրաւացի ասուած):
ԻՐԱԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ստուգաբա-
նութիւն, ճշմարտաբարութիւն, արդար-
բարտութիւն:
ԻՐԱԿԱՐԱՐ, մ. Իրաւապէս, իրաւամբք,
յիբաւի, ստուգաբար:
ԻՐԱԿԱՐԵՐԵԼ (իմ), չք. Իրաւունս առնել
(իրաւունքով վարուել):
ԻՐԱԿԱԳԷՏ, ա. գ. 1. Գիտակ, իրագէտ: 2.
Օրէնսագէտ, օրինադէտ:
ԻՐԱԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. 1. Հանճարե-
ղութիւն, զգօնութիւն, իմաստութիւն: 2.
Ճշմարտութիւն:
ԻՐԱԿԱԴԱՏ, ա. Արդարադատ, անաչառ:
ԻՐԱԿԱԴԱՏՈՒԹԻՒՆ, գ. Արդարադա-
տութիւն:
ԻՐԱԿԱԽՈՂ, ԻՐԱԿԱԽՈՐՀ, ա. 1. Արդար-
բարս, արդարամիտ, արդարասէր, իրա-
ւարար: 2. Ուղղախորհ, ողջախորհուրդ,
խոհապաւն, ուշիմ, զգօն, բանիբուն,
իմաստուն: 3. Բարեխոհ, բարեսէր,
բարեհաւան:
ԻՐԱԿԱԽՈՐՀՈՒՐԴ, տե՛ս ԻՐԱԿԱԽՈՂ:

ԻՐԱԿԱԿ, ԻՐԱԿԱԿԱՆ, ա. Իրաւ, արդար,
իրաւացի:
ԻՐԱԿԱԿՇԻՒՆ, տե՛ս ԱՐԴԱՐԱԿՇԻՒՆ:
ԻՐԱԿԱՄԲ, ԻՐԱԿԱՄԲՔ, տե՛ս ԻՐԱ-
ԻՈՒՆՔ-ի տակ:
ԻՐԱԿԱՆԱԼ, չք. 1. Արդարանալ (իրա-
ւացի և արդար գտնուել): 2. Վերահասու
լինել:
ԻՐԱԿԱՊԷՍ, տե՛ս ԻՐԱԿԱՐԱՐ:
ԻՐԱԿԱՐԱՐ, գ. Իրաւընտիր (արդար
դատաստան անող):
ԻՐԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. Արդարադա-
տութիւն (իրաւարար լինելը):
ԻՐԱԿԱՅԻ, ա. 1. Արդար: 2. Արդարացի,
ուղիղ: 3. Իրաւական, օրինական, օրի-
նաւոր: 4. մ. Իրաւամբք, արդարապէս,
իրաւաբար:
- ԻՐԱԿԱՅԻ Է, մք. Արժան է:
ԻՐԱԿԱՅՈՒՅԱՆԵԼ, պք. 1. Արդարա-
ցուցանել: 2. Ստուգել, ճշմարտել,
հաւաստել:
ԻՐԱԿԱՅՈՒՅԻՉ, ա. Արդարացուցիչ:
ԻՐԱԿԸՆՏԻՐ, տե՛ս ԻՐԱԿԱՐԱՐ:
ԻՐԱԿԻ, ա. մ. Իրաւացի, յիբաւի:
ԻՐԱԿՈՐԵԼ, նք. Իրագործել, ձեռն ի գործ
առնել՝ արկանել:
ԻՐԱԿՈՒԹԻՒՆ, գ. Իրաւունք, կարգ,
ուղղութիւն:
ԻՐԱԿՈՒՆՔ, գ. 1. Արդարութիւն, արդար-
բարտութիւն: 2. Կանոն, կարգ, սո-
վորութիւն: 3. Բաժին, հաս:
- ԻՐԱԿԱՄԲՔ կամ ԻՐԱԿԱՄԲ, մ. Ար-
դարապէս, իրաւաբար:
- ԻՐԱԿՈՒՆՍ ԱՌՆԵԼ, 1. Իրաւ առնել,
դատ առնել, արդարացուցանել: 2. Վրէժս
խնդրել, վրէժխնդիր լինել:
- ԻՐԱԿՈՒՆՍ ՏԱԼ կամ ՅՈՒՅԱՆԵԼ.
Արդարացուցանել, ջատագովել (պատ-
ճառօք):
ԻՐԱՓԱՌ, ա. Փառաւորեալ, փառաւոր:
ԻՐԵԱՐ, ԻՐԵՐԱՅ, գ. Միմեանց:
ԻՐԻՍ, տե՛ս ԾԻԱԾԱՆ:

ԻՐԻՑԱԳՈՅՆ, տե՛ս ԵՐԻՑԱԳՈՅՆ:
ԻՐԻՑՈՒԹԻՒՆ, տե՛ս ԵՐԻՑՈՒԹԻՒՆ:
ԻՐՈՂԱԲԱՐ, տե՛ս ԻՐՕՐԷՆ:
ԻՐՈՂԱԿԱՆ, ա. Իրական, արդիւնական,
ներգործական:
ԻՐՈՂՈՒԹԻՒՆ, գ. Իրակութիւն, իրագործ-
ուութիւն, եղելութիւն, գործ, արարուած,
լիր:
ԻՐՈՅԵԼ, նբ. Առնել, իրագործել:
ԻՐՕՐԷՆ, մ. Իրողաբար, իրօք, իսկապէս,
ճշմարտիւ:
ԻՐՕՔ, մ. Իրաւ, արդեամբք, իսկապէս,
արդարեւ:
ԻՅԷ ԶԻ, մ. Երբեմն, երբէք:
ԻՅԷ՛ ԹԷ, մ. եղբ. ձ. 1. Մի՞թէ, արդեօ՞ք:
2. Երանի՛ թէ, իցի՞ւ:
ԻՅԻ՞Ի, ԻՅԻ՞Ի ԹԷ, եղբ. ձ. 1. Երանի՛,
երանի՛ թէ, օ՛չ, օ՛չ թէ: 2. Առ իմէ՞:
ԻԻՂ, գ. 1. Զէթ: 2. Կոզի: 3. Մեռտն:
ԻԻՂԱԲԵՐ, ա. Խնկարեւր, խնկազգեսց
(կանայք):
ԻԻՂԱԳԼԽԵԼ, նբ. Օծանել, նուիրել,
ձօնել:
ԻԻՂԱԳԼԽՈՒԹԻՒՆ, գ. Նուիրումն,
օծումն, ձօնումն:
ԻԻՂԱԳԼՈՒԽ, ա. (կրօն.) Նուիրեալ,
նուիրական, օծեալ:
ԻԻՂԱԳՈՐԾ, ա. գ. Իւղեփեաց:
ԻԻՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. 1. Իւղեփեցու-
թիւն, իւղարարութիւն: 2. Օծումն,
իւղազլխութիւն:
ԻԻՂԱԼԻՐ, ա. Իւղալից (ձէթով լի):
ԻԻՂԱԼԻՑ, տե՛ս ԻԻՂԱԼԻՐ:
ԻԻՂԱՐԱՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ԻԻՂԱԳՈՐ-
ԾՈՒԹԻՒՆ (1):
ԻԻՂԱՐԿԵԼ, նբ. Պարարել:
ԻԻՂԱԻՐՈՂԿԱՆ, ա. Անուշահոտ,
համոյական:
ԻԻՂԵԼ, նբ. Օծանել:
ԻԻՂԵՓԵԱՅ, տե՛ս ԻԻՂԱԳՈՐԾ:
ԻԻՂԵՓԵՑՈՒԹԻՒՆ, տե՛ս ԻԻՂԱԳՈՐ-
ԾՈՒԹԻՒՆ (1):

ԻԻՂԸՆԶԻԻՂ ՓԱՅՏ, տե՛ս ԶԻԹԵՆԻ:
ԻԻՐՂ, ստաց. դ. Իւրական, առանձնա-
կան, սեպհական:
– ԻԻՐՔՆ, գ. Իւրայիւքն:
ԻԻՐՂ, անձ. դ. Ինքն:
ԻԻՐԱԲՆԱԿ, ա. Իւրակայան, սեպհական:
ԻԻՐԱԽՕՍ, ա. Խօսնայր:
ԻԻՐԱԾԻՆ, ա. 1. Հարազատ (իր ծնած): 2.
Իսկական, բուն:
ԻԻՐԱԿԱՅԱՆ, ա. Իւրաբնակ (իր բնիկ
կայանն եղող):
ԻԻՐԱԿԱՆ, ա. Իւրային, իւրոյին (իր
սեփական):
ԻԻՐԱԿԵՐՏ, ա. Իւրաստեղծ, իւրաշէն:
ԻԻՐԱԿԻՑ, ա. Յարակից, իւրական:
ԻԻՐԱՅԻՆ, ա. Իւրական, իւրոյին:
– ԻԻՐԱՅԻՆՔՆ, գ. յոգն. Իւրքն:
ԻԻՐԱՇԷՆ, տե՛ս ԻԻՐԱԿԵՐՏ:
ԻԻՐԱԿԷՍ, ա. Յատկապէս, առանձ-
նապէս:
ԻԻՐԱՍՏԵՂԾ, ա. Իւրակերտ:
ԻԻՐԱՅԵԱԼ, ա. Սեպհականեալ:
ԻԻՐԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Սեպհականեցու-
ցանել, սեպհականել:
ԻԻՐԱՔԱՆԶԻՐ, գ. Անցնիւր, անձնիւր:
ԻԻՐԵԱՆՑԱԿԱՆ, տե՛ս ԻԻՐԱԿԱՆ:
ԻԻՐԵԱՆՑԱՅԻՆՔՆ, գ. յոգն. Իւրքն,
իւրայիւքն:
ԻԻՐԵԱՆՑԱՆՄԱՆ, ա. Իւրեանցասարաս:
ԻԻՐԵԱՆՑԱՍԱՐԱՍ, տե՛ս ԻԻՐԵԱՆ-
ՑԱՆՄԱՆ:
ԻԻՐՈՅԻՆ, տե՛ս ԻԻՐԱԿԱՆ:
ԻԻՐՈՎԱԲԱՐ, տե՛ս ԻԻՐՈՎԻ:
ԻԻՐՈՎԻ, ԻԻՐՈՎԻՆ, մ. 1. Ինքնին,
անձամբ անձին, յանձնէ: 2. Կամոյին,
ինքնակամ, կամակար: 3. ա. Իւրոյին,
իւրական:
ԻԻՐՈՒԹԻՒՆ, գ. Սեպհականութիւն,
յատկութիւն, առանձնաւորութիւն:
ԻԻՐՈՒՐՈՅՆ, ա. Ինքնուրոյն, յատուկ,
բուն, հարազատ, իւրոյին, իւր:

Լ

ԼԱԲԻԻՐԻՆԹՈՍ, տե՛ս ԲԱԻԻՂ:
ԼԱԳՈՒԹԻՒՆ, գ. Թուրքամորթութիւն, խենեչուլթիւն, անառակուլթիւն:
ԼԱԼ, չբ. և նբ. Արտասուել, ողբալ, աշխարհլ, սգալ, կոծել:
ԼԱԼԱԿԱՆ, ա. գ. Եղերամայր, ողբերգակ, ճայնարկու:
ԼԱԼԱՀԱՌԱՉ, ա. Կականաւոր (լացով և Հառաչանքով լի):
ԼԱԼԵՏՂ, գ. Լալօնք, կոծատեղի:
ԼԱԼԻԻՆ, գ. Լալուճն, լաց, լալիք, լալուլթիւն, լալօնք, ողբ, ողբումն:
ԼԱԼԻՔ, ԼԱԼՈՒԹԻՒՆ, ԼԱԼՈՒՄՆ, տե՛ս ԼԱԼԻԻՆ:
ԼԱԼՕՆՔ, տե՛ս 1. ԼԱԼԻԻՆ: 2. ԼԱԼԵՏՂ:
ԼԱԿԱՆ, տե՛ս ԼԵԿԱՆ:
ԼԱԿԱՆԱԳԷՏ, ա. գ. Լականադէտ:
ԼԱԿԱՆԱԴԷՏ, տե՛ս ԼԱԿԱՆԱԳԷՏ:
ԼԱԿԵԼ, նբ. Լակիել:
ԼԱԿԻՇ, տե՛ս ՂԱԿԻՇ:
ԼԱՄԲ, գ. Օղամանեակ:
ԼԱՄԲԱՐ կամ ԼԱՄՊԱՐ, տե՛ս ՂԱՄԲԱՐ:
ԼԱՄԲԵԼ, նբ. Ըստանձնել:
ԼԱՄԲԻԻՐԻՆԹՈՍ, ԼԱՄԲՐԻՆԹ, տե՛ս ԲԱԻԻՂ:
ԼԱՅՆ, ա. Ընդարձակ, արձակ, լայնական:
ԼԱՅՆԱԳՈՅՆ, ա. 1. Ընդարձակագոյն: 2. մ. ձոխագոյն, լիով:
ԼԱՅՆԱԴԷՄ, ա. ԼԱՅՆԵՐԵՍ:
ԼԱՅՆԱԹԵԻ, տե՛ս ՄԵԾԱԹԵԻ:
ԼԱՅՆԱԼԻՃ, ա. Լիալիճ:
ԼԱՅՆԱԼԻՐ, ա. Լայնատարած:
ԼԱՅՆԱԽՈՐՀՈՒՐԳ, ա. Ընդարձակամիտ, երկայնամիտ:
ԼԱՅՆԱԾԱԿԱՆ, ա. Լայնատարած, ընդարձակ, լայնասփիւռ, համասփիւռ:

ԼԱՅՆԱԿԱՅԼԱԿ, ա. Առատահոս, յորդահոսան:
ԼԱՅՆԱԿԱՆ, տե՛ս ԼԱՅՆ:
ԼԱՅՆԱԶԱՅՆ, ա. Համարձակաճայն:
ԼԱՅՆԱԶԻԳ, ա. Լայնատարած:
ԼԱՅՆԱՆԱԼ, չբ. Լայնել, ընդարձակել:
ԼԱՅՆԱՆԻՍՏ, ա. Արձականիստ, լայնածաւալ:
ԼԱՅՆԱՋԻԼ, տե՛ս ԱՄՈԼԱՋԻԼ:
ԼԱՅՆԱՍՓԻԻՌ, տե՛ս ԼԱՅԼԱԾԱԿԱԼ:
ԼԱՅՆԱՏԱՐԱԾ, ա. Համատարած, լայնածաւալ, լայնածիք, լայնալիք:
ԼԱՅՆԱՏԱՐՐ, ա. Ընդարձակատարր:
ԼԱՅՆԱՅՈՒՅԱՆԵԼ, նբ. Լայնել, ընդարձակել, յերկարաձգել:
ԼԱՅՆԱՓՈՂՈՑ, գ. Պողոտայ:
ԼԱՅՆԵԼ, նբ. 1. Լայնացուցանել, ընդարձակել: 2. Անդորրացուցանել, դիւրել: 3. Բանալ, պարզել, յայտնել:
ԼԱՅՆԵՐԵՍ, տե՛ս ԼԱՅՆԱԴԷՄ:
ԼԱՅՆՇԻ, ա. Տափարակ (լայն ձևով):
ԼԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Ընդարձակուլթիւն, լայնուլթ:
ԼԱՅՆՈՒՅՐ, տե՛ս ԼԱՅՆՈՒԹԻՒՆ:
ԼԱՆՋԱԿԻՅ, ա. Գրկախառն:
ԼԱՆՋԱՆՈՑ, տե՛ս ԲԱՆԱԿ²:
ԼԱՆՋԱՊԱՀ, ԼԱՆՋԱՊԱՆ, ԼԱՆՋԱՊԱՆԱԿ, տե՛ս ՋՐԱՀ:
ԼԱՆՋՔ, գ. Կուրծք:
ԼԱՇԿԱՄԱՇԿ, տե՛ս ԼԵՇԿԱՄԱՇԿ:
ԼԱՇԿԱՐ, գ. Ջօր:
ԼԱՊՏԵՐ, գ. Ճրագ, կանթեղ, դամբար:
ԼԱՍՏ, գ. Լաստափայտ:
ԼԱՍՏԱՓԱՅՏ, տե՛ս ԼԱՍՏ:
ԼԱՍՏԵԼ, նբ. Հանդերձել, պատրաստել, կազմել, կարգել:
ԼԱՏՐԱՏԵԼ, չբ. նբ. Հաջել, փխբ. բամբասել, զրպարտել:
ԼԱՐ, գ. 1. Առասան, պարան, ապաւանդակ, տուն, չուան, թիւ: 2. Մղոն: 3. Որոգայթ, հաղբք, թակարգ: 4. յոգն. Ջիլք (պարանոցի):

ԼԱՐԵԼ, նբ. Զգտել (աղեղի լարը):
ԼԱՑ, տե՛ս ԼԱԼԻԻՆ:
ԼԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Ողբացուցանել:
ԼԱԻ, ա. 1. Բարի, բարեմիտ: 2. Քաջ, առաքինի, շնորհալի: 3. Ընտիր, պատուական: 4. Հաճելի, հաճոյական: 5. Օգտակար, շահեկան: 6. մ. Լաւ ևս, լաւագոյնս, բարւոք:
- ԼԱԻ ԵՒՍ, տե՛ս ԼԱԻ (6):
- ԼԱԻ Է, մբ. Բարւոք է, հաճոյ է, օգուտ է:
ԼԱԻԱԲԱՐ, մ. Բարւոք, քաջապէս:
ԼԱԻԱԲԱՐՈՒԹԻԻՆ, գ. Առաքինութիւն:
ԼԱԻԱԳՈՅՆ, ԼԱԻԱԳՈՅՆՍ, ա. մ. Լաւ ևս (աւելի լաւ, աւելի լաւ կերպով):
ԼԱԻԱԽՕՍ, ա. Քաղցրախօս:
ԼԱԻԱԿԱՄ, ա. Բարեսէր:
ԼԱԻԱԿԱՄՈՒԹԻԻՆ, գ. Բարեխոհութիւն, բարեբարոյութիւն:
ԼԱԻԱԿՆ, ա. Քաղցրահայտ:
ԼԱԻԱՀԱՅԵԱՑ, ա. Լաւակն, ողջամիտ, աննախանձ:
ԼԱԻԱՆԱԼ, չբ. 1. Բարիանալ (բարի՝ լաւ դառնալ): 2. Զօրանալ, տիրել, իշխել:
ԼԱԻԻՄԱՑ, ա. Քաջիմաց, իմաստուն, ողջամիտ, մտացի:
ԼԱԻՈՒԹԻԻՆ, գ. Բարութիւն, բարե-լաւութիւն, բարեպաշտութիւն, առաքինութիւն, քաջութիւն:
ԼԱԻՐԱ, գ. Վանք:
ԼԱՓԱՏԵԼ, նբ. Լափել, կեղեքել:
ԼԱՓԵԼ, ԼԱՓԼԻՉԵԼ, նբ. 1. Լակել: 2. փխբ. Կրանել, սպառել, ծախել:
ԼԵԱՌՆ, գ. Սար:
ԼԵԱՌՆԱԿԱՆ, տե՛ս ԼԵՌՆԱԿԱՆ:
ԼԵԱՌՆԱԿՈՂՄՆ, տե՛ս ԼԵՌՆԱԿՈՂՄՆ:
ԼԵԱՌՆԱՆԱԼ, տե՛ս ԼԵՌՆԱՆԱԼ:
ԼԵԱՐԴ, գ. (կզմխս.) Լերդ:
ԼԵԳԷՈՆ, ԼԵԳԷՈՎՆ, գ. 1. Փաղանգ, գունդ: 2. Զինուոր (լեգէոնի): 3. Դև (չար ոգի): 4. ա. Լեգէոնական, յոգնախումբ, բազմազունդ:
ԼԵԳԷՈՆԱԽՈՒՄԲ, ա. Յոգնախումբ,

բազմախումբ, բազմազունդ:
ԼԵԶՈՒ, գ. 1. Խօսարան, պատասխանարան: 2. Բարբառ (որևէ ազգի լեզու): 3. Ազգ: 4. Խօսք: 5. Մարդ (խօսող անձ): 6. Շուրթն (մի բանի ծայրը):
- ԼԵԶՈՒԻ ՏԱԼ. Շաղակրատել:
ԼԵԶՈՒԱԳԱՐ, ա. Զարալեզու, շատախօս, շարժաղի, շաղաւաշուրթն:
ԼԵԶՈՒԱԳԱՐԵԼ (իմ), չբ. Շարժաղի, դատարկաբանել, բարբաջել, բաջաղել:
ԼԵԶՈՒԱԳԱՐՈՒԹԻԻՆ, գ. Զրախօսութիւն, շարժաղիութիւն, շարակրատութիւն, բանդագուշանք:
ԼԵԶՈՒԱՀԱՑ, ա. մ. Լեզուատ (լեզուն կտրած, կտրուած լեզուով):
ԼԵԶՈՒԱՅԻՆ, տե՛ս ԼԵԶՈՒԱՆԻ:
ԼԵԶՈՒԱՆԵԼ (իմ), տե՛ս ԼԵԶՈՒԱԳԱՐԵԼ (իմ):
ԼԵԶՈՒԱՆԻ, ա. Շատախօս, շարժաղի, լեզուագար:
ԼԵԶՈՒԱՆՈՒԹԻԻՆ, գ. Շատխօսութիւն, շարժաղիութիւն:
ԼԵԶՈՒԱՑ, ա. Լեզուահատ:
ԼԵԶՈՒԼ, նբ. Լիզել, լիզուլ:
ԼԵԿԱՆ, գ. Կոնք, լական, ոտնալուաց:
ԼԵՂԱԼ, տե՛ս ԼՈՂԱԼ:
ԼԵՂԱԽԱՌՆ, ա. Դառնաթորմի:
ԼԵՂԱՀԱՄ, ա. Դառն, մաղձահամ:
ԼԵՂԻ, գ. Մաղձ:
ԼԵՇԿ, ա. Լերկ:
ԼԵՇԿԱՄԱՇԿ, ա. Լաշկամաշկ, լերկամորթ:
ԼԵՇԿԵԼ (իմ), չբ. Մաշել, լերկանալ:
ԼԵՊԵՇՏԻ, ա. Լպիրշ, լրբ, յանդուգն, խենչշ, անառակ:
ԼԵՌՆԱԲԵՐՁ, ա. Լեռնաձև:
ԼԵՌՆԱԲՆԱԿ, ա. 1. Միայնակեաց (լեռներու): 2. Միակեցական, առանձնական:
ԼԵՌՆԱԴԱՇՏ, ԼԵՌՆԱԴԱՇՏԱԿ, գ. Հովիտ:
ԼԵՌՆԱԽՈՅՍ, ա. Լեռնամուտ:
ԼԵՌՆԱԿ, գ. Բլուր:

ԼեՌՆԱԿԱՆ, ա. գ. 1. Լեռնային: 2. Լեռնական, լեռնակեաց, լեռնակեցիկ: ԼեՌՆԱԿԱՐԿԱՌ, տե՛ս ԼեՌՆԱԿՈՅՑ: ԼեՌՆԱԿԵԱՅ, ԼեՌՆԱԿԵՅԻԿ, ա. գ. 1. Լեռնական (լեռների բնակիչ): 2. Լեռնաբնակ, միայնակեաց: ԼեՌՆԱԿԵՅՈՒԹԻՒՆ, գ. Միայնակեցութիւն (լեռնակեաց լինելը): ԼեՌՆԱԿՈՂՄՆ, գ. 1. Լեռնակողմն: 2. ա. Լեռնային: ԼեՌՆԱԿՈՅՑ, ա. Լեռնակարկառ (լեռան պէս կուտակուած՝ դիզուած): ԼեՌՆԱՁԵԻ, ա. Լեռնանման, լեռնաբերձ: ԼեՌՆԱՁՈՐ, տե՛ս ԼեՌՆԱՄԷՋ: ԼեՌՆԱՄԷՋ, գ. Լեռնացամէջ, լեռնածոր: ԼեՌՆԱՄՈՒՏ, տե՛ս ԼեՌՆԱԽՈՅՍ: ԼեՌՆԱՅԻՆ, ա. գ. 1. Լեռնական (որտեղ լեռներ կան): 2. Լեռնակեաց: ԼեՌՆԱՅՈՒՈՎ, ա. Լեռնային (լեռներով շրջապատուած): ԼեՌՆԱՆԱԼ, չբ. Բարձրանալ, կուտանալ, մեծանալ: ԼեՌՆԱՆՄԱՆ, տե՛ս ԼեՌՆԱՁԵԻ: ԼեՌՆՈՏԵԱՅԲ, գ. յոգն, Լեռնականք: ԼեՌՆՈՏՆ, գ. Ստորոտ, ոտն (լեռան): ԼեՌՆՕՐԷՆ, ա. մ. Լեռնանման: ԼեՍԱՆ, գ. Յեսան: ԼեՍՈՒԼ, նբ. Մանրել, մաշել, փշրել: ԼեՍՈՒՐ, տե՛ս ԿՂԵՍՈՒՐ: ԼեՐԱՆՅԱՄԷՋ, տե՛ս ԼեՌՆԱՄԷՋ: ԼեՐԴ, տե՛ս ԼեԱՐԴ: ԼեՐԴԱԲԵԿԵԼ, նբ. Աճաբեկ առնել, աճաբեկել: ԼեՐԴԱԲՈՅԹ, տե՛ս ԲԼԹԱԿ (2): ԼեՐԿ, ա. 1. Լեղկ: 2. նման. Մերկ: 3. (քեր.) Նուրբ (բաղաձայն): ԼեՐԿԱՄԱՐՄԻՆ, ա. Լերկամորթ, լեղկամաշկ: ԼեՐԿԱՄՈՐԹ, տե՛ս ԼեՐԿԱՄԱՐՄԻՆ: ԼեՐԿԱՆԱԼ, չբ. Մերկել, մերկանալ: ԼեՐԿՈՒԹԻՒՆ, գ. Մերկութիւն:

ԼեՒԻԱԹԱՆ, գ. Վիշապ (ծովային): ԼեՓ, ԱՌ ԼեՓ, մ. ա. Առ ի շեղ, զառ ի վայր, դարահոս: ԼԻ, ա. 1. Ջեղուն, առատ, անպակաս: 2. Անթրի, ամբողջ, կատարեալ: 3. մ. Լիով, լրութեամբ, իսպառ, ամենայնիւ: - ԼԻ ԱՆԵՆԵԼ. Լնուլ, լցուցանել: - ԼԻ ԿԱՏԱՐԵԱԼ, ԼԻ ԲՈՎԱՆ ԴԱԿ, տե՛ս ԼԻԱԿԱՏԱՐ: ԼԻԱԲԱԽՏԻԿ, ա. մ. Բարերջանիկ (բարերախտութեամբ լի): ԼԻԱԲԵՐ, ա. Բազմաբեղուն: ԼԻԱԲԵՐԱՆ, ա. մ. Բերանալիբ: ԼԻԱԲՈՒՂԽ, ա. Ջեղուն, առատաբուղիս, յորդառատ: ԼԻԱԲՈՒՌՆ, ա. մ. Բռնալիբ, լիածեռն: ԼԻԱԳԻՐԿԲ, ա. մ. Գրկալիբ, լիալիծ: ԼԻԱԳՈՅՆ, ա. 1. Յորդառատ (աւելի լի): 2. Կատարելագոյն: ԼԻԱԱՅՆ, ա. Ընդարձակ, անպակասելի: ԼԻԱԼԻՃ, ա. Լայնալիծ, լիագիրկք: ԼԻԱԽՈՐՏԻԿ, ա. Յլփացեալ: ԼԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Լիութիւն, առատութիւն: ԼԻԱԿԱՏԱՐ, ա. մ. Լի կատարեալ, լի բովանդակ, լիով, կատարելապէս, տիրապէս: ԼԻԱՀԱՆՃԱՐ, ա. Բազմաճանճար, իմաստուն: ԼԻԱՁԵՌՆ, ա. մ. Առատածեռն, լիաբուռն: ԼԻԱՁԻԳ, ա. Հաստածիք, կորովածիք: ԼԻԱՁԻՐ, ա. Առատածիբ: ԼԻԱՄԱԳԻԼ, ա. Բազմամազիլ: ԼԻԱՆԱԼ, չբ. 1. Ճոխանալ: 2. Գալ ի լրումն (լուսնի մասին): ԼԻԱՊԱՏԱՐ, ա. Լի և լի, լիուլի, լրապատար, յեղցեալ, առատ, զեղուն, լիակատար, անթերի: ԼԻԱՊԱՐԳԵԻ, ա. Առատապարզև, առատածիբ: ԼԻԱՊԷՍ, մ. 1. Լիով, առատապէս: 2.

Անթերի, կատարելապէս:
ԼԻԱՊՏՈՒՂ, ա. Պողալից, պողաբեր:
ԼԻԱՍԱՀՄԱՆ, ա. մ. Լայնատարած (ընդարձակ սահմանով):
ԼԻԱՐԱՐ, ա. Առլցեալ:
ԼԻԱՑՈՒՑԱՆՆԵԼ, պբ. 1. Լնուլ, լցուցանել, առատացուցանել: 2. Շատացուցանել: 3. Լրացուցանել, կատարելագործել:
ԼԻԲԱՆՈՆ, գ. Կնդրուկ:
ԼԻ ԵՒ ԼԻ, ա. մ. Լիուլի, պղպղուն, լի կատարեալ, լի բովանդակ, լիակատար, անթերի, իսպառ:
ԼԻԶԱՆՆԵԼ, նբ. Լեզուլ, լափել:
ԼԻԶԱԶԻՆՋ ԱՌՆԵԼ. Բնաջինջ առնել:
ԼԻԶԵԼ, ԼԻԶՈՒԼ, նբ. 1. Լիզանել, լեզուլ: 2. փխբ. Լափել, ծախել, սպառել:
ԼԻԿ, տե՛ս ԼԻԺ:
ԼԻԺ, գ. Ծովակ, լիկ:
- ԼԻԺ ԼՈՒՍՈՑ. Աչք:
- ԼԻԺ ՀՐՈՅ. Դժուրք:
ԼԻՆԵԼ (իմ), չբ. 1. Եղանել, գտանել, գոլ: 2. Ստեղծանել, գոյանալ: 3. Ծնանել, սերել, ծագել: 4. Կալ, բնակել, դադարել: 5. Գործել, կատարել: 6. Դիպել, դէպ լինել: 7. Պատաղել, դեգերել:
- ԼԻՆԵԼ ԱՌՆ. Ամուսնանալ (կնոջ մասին):
- ԼԻՆԵԼ ԸՆԴ ՈՒՄԵՔ. Խառնակել (մէկի հետ կենակցել):
ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ, գ. 1. Եղանութիւն, ստեղծումն, արարչութիւն: 2. Գոյաւորութիւն, գոյացութիւն, գոյութիւն, ծնունդ, ծագումն:
ԼԻՆՈՒՄՆ ՈՐԴԻՈՅ. Որդեծնութիւն, մանկարարութիւն, մանկագործութիւն:
ԼԻՈՎ, մ. ա. Լիապէս, առատապէս, անպակաս, լիուլի:
ԼԻՈՒԹԻՒՆ, գ. 1. Լիր, բովանդակութիւն, լրութիւն, բաւականութիւն, առատութիւն, ճոխութիւն: 2. Յագուրդ: 3. Լրումն (լուսնի):
ԼԻՈՒԼԻ, տե՛ս ԼԻ ԵՒ ԼԻ:

ԼԻՐ, գ. Լրումն, լրութիւն, բովանդակութիւն:
- ԼԻՐ ԱՐԿԱՆԵԼ. Լնուլ (խրամը, փոսրեան):
ԼԻՐԲ, ա. 1. Անամօթ, անպատկառ, լպիրշ, ժպիրհ: 2. Լրբենի (լրբութիւն արտայայտող):
ԼԻՅՔ, գ. Քուեայ, քուէ:
ԼԻԻՂ, ԼԻԻՂԵԼ (իմ), տե՛ս ԼՈՂ, ԼՈՂԵԼ (իմ):
ԼԼԿԱՆՔ, գ. Լլկութիւն, լլկումն, լլուկ, խոշտանգանք, տանջանք, չարչարանք, տառապանք, նեղութիւն, տագնապ:
ԼԼԿԵԼ, նբ. 1. Խոշտանգել, տանջել, չարչարել, նեղել, աշխատ առնել: 2. Բռնաբարել, տառապեցուցանել:
ԼԼԿԻՉ, ա. Լլկող:
ԼԼԿՈՂ, տե՛ս ԼԼԿԻՉ:
ԼԼԿՈՒԹԻՒՆ, ԼԼԿՈՒՄՆ, ԼԼՈՒԿ, տե՛ս ԼԼԿԱՆՔ:
ԼԾԱԲԱՐՁ, տե՛ս ԼԾԱՁԻԳ:
ԼԾԱԴԻՐ, ա. Հարկադիր, ծառայացուցիչ:
ԼԾԱԿ, գ. 1. Բառնալիք, նիգ: 2. Լուծ (կշէւքի ձողը):
